«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

«Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ–ի (այսուհետ՝ ՄՊԲՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ.հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը:

Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա: Զեկույցը պարունակում է ՄՊԲՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 12

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 16

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 16

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 18

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 21

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 27

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 33

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 39

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 44

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 48

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 52

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 56

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 59

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 64

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 65

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 65

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 67

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 69

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 71

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 72

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական գնահատում իրականացնելիս խումբը հաշվի է առել, որ Մարտունու պետական բժշկական քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է՝ «միջին մասնագիտական ուսուցման միջոցով հանրային ծառայության համակարգը բարձր որակավորում ունեցող առողջապահական ոլորտի մասնագետներով ապահովումը»: Մարտունու պետական բժշկական քոլեջի ծավալած գործունեությունը համապատասխանում է հաստատության որդեգրած առաքելությանը և համահունչ է Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակին: ՄՊԲՔ կրթական ծրագրերը կազմված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա (ՊԿՉ), վերջերս անցել են մոդուլային ուսուցման: Քոլեջը դեռևս աշխատանքներ ունի իրականացնելու ՊԿՉ-ները լիրաժեք տեղայնացնելու և իր ռեսուրսային ապահովվածությանը հարմարացնելու ուղղությամբ: Մասնագիտական կրթական ծրագրերում (ՄԿԾ) կատարվում են փոփոխություններ, որոնք հիմնականում վերաբերում են գործնական և տեսական ժամերի բաշխմանը: Քոլեջում բացակայում են ՄԿԾ-ների մշտադիտարկման քաղաքականությունը և ընթացակարգը, սակայն առկա են մշտադիտարկման առանձին մեխանիզմներ՝ դասալսումներ, հարցումներ: «Դեղագործություն» կրթական ծրագիրը քոլեջի ամենամրցունակ կրթական ծրագիրն է: 2021թ. ծրագրում ներդրվել է նաև հետազոտական աշխատանքների կատարումը, որը նպաստում է ուսանողների գիտելիքների և կարողությունների ամրապնդմանը, ինչպես նաև վերլուծական կարողությունների զարգացմանը: ՄՊԲՔ ՄԿԾ-ների շրջանակներում ուսանողներին տրամադրվում են այնպիսի առաջադրանքներ, որոնք թույլ են տալիս ուսանողի մոտ ձևավորելու մասնագիտական կարողություններ: Միևնույն ժամանակ կարևոր է բոլոր ՄԿԾ-ների ամփոփիչ ատեստավորման ընթացում շեշտադրել գործնական կարողությունների գնահատումը:

ՄՊԲՔ-ում դասավանդում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ և պրակտիկ բժիշկներ, պետք է նշել, պրակտիկ դասախոսական կազմի առկայությունը քոլեջի ուժեղ կողմերից մեկն է: Պրակտիկ դասախոսները որպես բժիշկներ պարբերաբար մասնակցում են մասնագիտական վերապատրաստումների, իսկ ոչ պրակտիկ մասնագետները մասնակցում են պետական մարմինների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, որոնք հիմնականում միտված են մեթոդական կարողությունների

[1] ՀԱՎԵԼԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

զարգացմանը: Կազմակերպվող վերապատրաստումների հիմքում միշտ չէ, որ ընկած են կարիքների ուսումնասիրությունը: Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ քոլեջը, լինելով մարզային ուսումնական հաստատություն, կարողացել է իր շուրջը հավաքել բանիմաց մասնագետների: Հատկանշական է քոլեջի քաղաքականությունը նոր կադրեր ներգրավելու ու իրենց կարողությունները զարգացնելու ուղղությամբ՝ միևնույն նեղ մասնագիտական ուղղությամբ 1-ից ավելի դասախոս ունենալու ձգտումը, որը թույլ է տալիս քոլեջին ունենալ դասախոսական կազմի կայունություն:

Ենթակառուցվածքի և ռեսուրսային բազայի շարունակական բարելավումները քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից են, և այս տարիներին որոշակիորեն տեղի են ունեցել լսարանների վերանորոգման աշխատանքներ: Փորձագիտական խմբի դիտարկմամբ, քոլեջի ռեսուրսային բազան դեռևս բարելավման և հագեցման կարիք ունի, առկա չեն այն հիմնական լաբորատորիաները և կաբինետները, որոնք անհրաժեշտ են ՊԿՉ-ներով սահմանված վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերման համար: Ռեսուրսային բազայի բացակայությունը քոլեջը փորձում է լուծել Մարտունի բժշկական կենտրոնի (այսուհետ՝ Մարտունի ԲԿ) և վիդեոդասերի, պաստառների, նկարների միջոցով: Փորձագիտական խումբը գիտակցում է, որ քոլեջն իր ունեցած ֆինանսական միջոցներով ի վիճակի չի լինի կարճ ժամանակահատվածում լրացնել ռեսուրսային հագեցվածության խնդիրը, այդ տեսանկյունից շատ է կարևորվում հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավումը, ինչպես նաև գործատուների հետ համատեղ ռեսուրսի կիրառումը: Անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ, որոնց միջոցով գործատուներն առավել հակված կլինեն իրենց ռեսուրսները տրամադրել քոլեջին համապատասխան մասնագետ ստանալու համար: Փորձագիտական այցի ընթացքում կառուցման փուլում էր գտնվում նաև Մարտունի ԲԿ-ի նոր շենքը, որը հետագայում պետք է հագեցված լինի նորագույն սարքավորումներով, փորձագիտական խումբը հույս է հայտնում, որ բժշկական կենտրոնի կառուցումից հետո քոլեջի ուսանողները հնարավորություն կունենան պրակտիկ կարողություններ ձեռք բերել նորագույն ռեսուրսների կիրառմամբ, այս փաստը կմեղմացնի քոլեջի ռեսուրսային բազայի անկատարությունը:

Կառավարման արդյունավետության տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում մշակվել են մի շարք փաստաթղթեր, որոնք կարող են ապահովել իրականացվող գործընթացների համակարգային իրականացումը: Ինչ վերաբերում է ռազմավարական կառավարմանը, ապա պետք է նշել, որ նոր մշակված ռազմավարական ծրագրում առկա են մի շարք խնդիրներ՝ գնահատման արդյունավետության ցուցիչների (ԳԱՑ) բացակայություն, ժամկետների անհստակություն, պատասխանատվությունների անհավասարաչափ բաշխում, բացի այդ ՌԾ իրականացման ժամանակցույցում ՌԾ նպատակները և խնդիրները չեն վերածվել գործողությունների, այլ արտապատկերվել են որպես խնդիրներ, ինչպես նշված է եղել ՌԾ-ում: Փորձագիտական խմբի կողմից նշվում է, որ երկարաժամկետ և կարճաժկետ պլանները լիարժեքորեն համադրելի չեն, առկա չեն կառավարման համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Ե՛վ տնօրենի, և՛ ստորաբաժանումների հաշվետվությունները առավելապես նկարագրողական են,

քանակական և որակական վերլուծություններ չեն ներառում: Փորձագիտական խումբը կարևորում է այն, որ քոլեջում ներդրվել է որակի ապահովման համակարգը, առկա է համապատասխան ՈԱ պատասխանատու և փաստաթղթային հենք: Այս ժամանակահատվածում իրականացվել են հարցումներ ուսանողների և ծնողների շրջանում, դուրս են բերվել որոշ խնդիրներ, որոնք իրենց լուծումներն են ստացել: Որակի ապահովման համակարգը դեռևս չի հասցրել ամբողջապես կայանալ և մշակել համապատասխան գործիքակազմեր բոլոր գործընթացները գնահատելու և տվյալներ դուրս բերելու համար: Որակի ապահովման համակարգի դուրս բերած տվյալները դեռևս ամբողջապես բավարար չեն կառավարչական որոշումներ կայացնելու համար, մասնավորապես չեն գնահատվում տնօրենի, ստորաբաժանումների և առանձին վարչական աշխատակիցների աշխատանքի, ՄԿԾ-ների և այլ գործընթացների աշխատանքի արդյունավետությունը: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ՈԱ պատասխանատուի ջանքերը միտված քոլեջի գործընթացների կանոնակարգմանը՝ մասնավորապես փաստաթղթերի մշակմանը, ինչպես նաև հարցումների իրականացման մշակույթի ներդրմանը, այուամենայնիվ խումբը գտնում է, որ ՈԱ համակարգի կայացման և որակի մշակույթի ներդրման համար քոլեջում դեռևս շատ աշխատանքներ կան իրագործելու:

ՄՊԲՔ-ում գործում են դիմորդների հավաքագրման հստակ մեխանիզմներ, ինչպես նաև գնահատվում են այդ մեխանիզմների արդյունավետությունը, որը հնարավորություն է տալիս քոլեջին ծավալելու առավել թիրախային գործունեություն, որն էլ նպաստում է ուսանողների թվաքանակի ավելացմանը: Ուսանողներն ազատ են իրենց խնդիրները բարձրաձայնելու հարցում: Քոլեջում բարձր մակարդակի վրա են դրված խորհրդատվական ծառայությունները, որոնց համար սահմանված է հստակ ժամանակցույց, այն պարտադիր գործընթաց է հատկապես բացակայած ուսանողների համար: Խորհրդատվական ժամերի առկայությունը նվազեցնում է անհարկի բացակայությունները և բարձրացնում ուսանողի պատասխանատվությունը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ 2021թ.-ից «Դեղագործություն» ՄԿԾ-ի շրջանակներում ներդրվել են հետազոտական բնույթի աշխատանքներ: Փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի ջանքերը այս կարճ ժամանակահատվածում իր կողմից իրականացրած աշխատանքի համար՝ հույս հայտնելով, որ հետազոտական միտք և կարողություն ձևավորող աշխատանքներ կներդրվեն նաև մնացյալ ՄԿԾ-ներում, ինչպես նաև կբարելավվեն ներկայիս արդյունքները: Անհրաժեշտություն է նկատվում նաև մշակելու հետազոտական աշխատանքների խրախուսման քաղաքականություն, որը խթան կհանդիսանա և՛ ուսանողներին, և՛ դասախոսներին ներգրավելու հետազոտական և ստեղծագործական աշխատանքներում: Դասախոսական կազմի կողմից հետազոտությունների իրականացման համար քոլեջն ունի մեծ ներուժ, քանի որ դասախոսներն ունեն ինչպես դասավանդելու փորձառություն, այնպես էլ պրակտիկ բժշկական գործունեություն ծավալելու: Դասախոսական կազմի կողմից հետազոտությունների իրականացումը կնպաստի քոլեջում առկա լավագույն փորձի դուրս բերմանը և տարածմանը, որն էլ կմեծանի քոլեջի հեղինակությունը:

Քոլեջում ներդրված է ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ: Միևնույն ժամանակ խնդրահարույց է հաշվետվությունների նկարագրողական և ոչ վերլուծական լինելը: Քոլեջի կայքեջը մշակման փուլում է, այս պահին ակտիվորեն գործում է ֆեյսբուքյան էջը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կողմից իրականացված աշխատանքները հասարակությանը գիտելիքի փոխանցման ուղղությամբ: Տարաբնույթ վերապատրաստումները և կամավորական աշխատանքները նպաստում են հասարակության շրջանում քոլեջի գործունեության մասին տեղեկացվածության բարձրացմանը, ինչպես նաև ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը:
Արտաքին կապերը և միջազգայնացումը քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից է: Գործընթացները պլանավորված չեն իրականացվում, որը կարող է վտանգել նպատակի իրականացումը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ քոլեջը ձգտում է զարգացնել իր տեղական և միջազգայնացման ուղղությամբ կապերը: Արտաքին կապերի տեսանկյունից կարևորվում է գործատուների հետ համագործակցությունը, սակայն այս պահի դրությամբ համագործակցության շրջանակը սահմանափակվում է հիմնականում պրակտիկաների կազմակերպմամբ: Միջազգայնացման ուղղությամբ ամենաառանցքայինն օտար լեզվի, հատկապես անգլերեն լեզվի իմացության բարելավումն է ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսական և վարչական անձնակազմի մոտ: Կարևոր է նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը ՄԿԾ-ների իրականացման տեսանկյունից, որը հնարավորություն կընձեռնի ապահովել նորարարությունների մուտքը քոլեջ:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Տարածաշրջանում ունեցած ռազմավարական նշանակությունը,
2. նվիրված վարչական և դասախոսական աշխատակազմը,
3. արդյունավետ իրականացվող բժշկական ՄԿԾ-ները,
4. ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունները,
5. շրջանավարտների աշխատանքի ընդունվելու ցուցանիշները,
6. սկսնակ դասախոսների առաջխաղացման համար ստեղծված հնարավորությունները,
7. պրակտիկ բժիշկ-դասախոսների առկայությունը,
8. հետազոտական աշխատանքների ներդրումը «Դեղագործություն» ՄԿԾ-ում,
9. ռեսուրսային բազայի լրացման նպատակով Մարտունի ԲԿ-ի հետ համագործակցությունը,
10. դասախոսական և ուսանողական կազմերի կողմից իրականացվող կամավորական աշխատանքները հասարակության լայն շերտերի համար,
11. ուսանողների և ծնողների շրջանում իրականացվող հարցումները:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Իրավիճակային կառավարումը, թույլ ռազմավարական պլանավորումը,

2. ՌԾ-ում ԳԱՑ-երի, ժամանակացույցի հստակության բացակայությունը, գործառույթների անհավասարաչափ բաշխումը,
3. երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների միջև կապի խզումը,
4. ՄԿԾ-ների մշտադիտարկման և բարելավման քաղաքականության բացակայությունը,
5. ՄԿԾ-ներում հետազոտական աշխատանքի ոչ հավասարաչափ ներդրումը,
6. սահմանափակ նյութատեխնիկական ռեսուրսները,
7. միջազգային համատեղ ծրագրերի, միջազգային կենտրոնների հետ համագործակցության, դասախոսական կազմի և ուսանողների շարժունության ծրագրերի բացակայությունը,
8. արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ոչ պլանավորված լինելը, ինչպես նաև ամբողջ պատասխանատվությունը մեկ անձ վրա դնելը,
9. դասախոսական կազմի (անգլերեն) և ուսանողների շրջանում օտար լեզվի իմացության ցածր մակարդակը,
10. պաշտոնական կայքէջի բացակայությունը,
11. քոլեջում իրականցվող գործընթացների գնահատման համար մեխանիզմների և գործիքակազմի բացակայությունը։

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Հստակ տարանջատել քոլեջի առաքելությունը՝ սահմանելով այն հակիրճ և ներքին ու արտաքին շահակիցներին հասկանալի ձևաչափով։
2. Վերանայել ՌԾ-ը՝ հստակ տարանջատելով նպատակները, խնդիրները, արդյունավետության գնահատման ցուցիչները։
3. Գնահատել ֆինանսական հնարավորությունները սահմանված նպատակների իրատեսականությունը գնահատելու, հավելյալ ֆինանսական միջոցների չափը հասկանալու համար։
4. Վերանայել ՌԾ-ի իրականացման ժամանակացույցը՝ նշելով խնդիրների լուծման գործողությունները, արդյունավետության գնահատման ցուցիչները, վերանայելով և հստակեցնելով ժամկետները, պատասխանատուներին։
5. Սահմանել հստակ մեխանիզմներ ՌԾ նպատակների արդյունավետության գնահատման համար՝ կիրառելով գնահատման առանցքային ցուցանիշները։

Կառավարումն ու վարչարարությունը

6. Ներդնել կառավարման համակարգի գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներ։
7. Ներդնել ՊԻԳԲ շրջափուլը կառավարման բոլոր գործընթացներում։
8. Սահմանել հստակ գործառույթներ և հստակ պահանջներ արտաքին կապերի և միջազգայնացման, ֆինանսական մուտքերի բազմազանեցման գործընթացները

արդյունավետ իրականացնելու նպատակով՝ անհրաժեշտության դեպում զարգացնելով նաև աշխատակիցների կարողությունները։

9. Կապակցել բոլոր ստորաբաժանումների կարճաժամկետ պլանները երկարաժամկետ ռազմավարական պլանին։

Մասնագիտության կրթական ծրագրերը

10. Մշակել և ներդնել ՄԿԾ-ների մշտադիտարկման, բարելավման քաղաքականություն և ընթացակարգ՝ հստակեցնելով պարբերականությունը, գործիքները, պատասխանատուները և արդյունքների ներկայացման ձևաչափը՝ գործընթացներին ներգրավելով նաև ներքին և արտաքին շահակիցներին։
11. Մշակել և իրականացնել համեմատական վերլուծության (բենչմարքինգ) քաղաքականություն՝ բացահայտելով և տեղայնացնելով տեղական և արտասահմանյան բժշկական քոլեջներում իրականացվող դրական փորձը։
12. Ավելացնել վիդեոդասեր դասախոսների ուսումնառության նյութերում, որը կօգնի ռեսուրսների բացակայության պայմաններում ուսանողներին ներկայացնել համապատասխան մեթոդները, իրավիճակները կամ գործընթացները։
13. Բոլոր ՄԿԾ-ներում բարելավել պետական ավարտական քննությունների անցկացումը՝ առավել շատ հիմնվելով ուսանողների գործնական կարողությունների ցուցադրման վրա։

Ուսանողները

14. Մշակել և նախաձեռնել ուսանողների համար լրացուցիչ պարապմունքներ՝ շարունակաբար գնահատելով դրանց արդյունավետությունը։
15. Մշակել և կիրառել ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմներ։
16. Մշակել մեխանիզմներ ՈւԽ-ի՝ որպես ինքնուրույն որոշումներ ընդունող կառույցի, դերը մեծացնելու համար։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

17. Մշակել և ներդնել դասախոսների համակարգային գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր՝ հիմվելով ունեցած փորձի վրա։
18. Իրականացնել դասախոսների մասնագիտական կարիքների վերհանում և դրա հիման վրա մշակել վերապատրաստումների ծրագիր։
19. Վերանայել և լիարժեք կիրառության մեջ դնել դասախոսների խրախուսման քաղաքականությունը՝ ներառելով դասախոսի համակարգված գնահատման արդյունքները, հետազոտական աշխատանքների իրականացումը և այլն։
20. Իրականացնել վարչական աշխատակազմի պաշտոնների և պարտականությունների հավասարաչափ բաշխում։

Հետազոտությունը և զարգացումը

21. Մշակել և գործարկել դասախոսների և ուսանողների հետազատական աշխատանքները խրախուսող քաղաքականություն՝ ապահովելով նորարարությունների մուտքը քոլեջ:
22. Մշակել և բազմազանեցնել բոլոր ՄԿԾ-ներում ուսանողներին տրվող հետազոտական, վերլուծական կարողություններ ձևավորող առաջադրանքները:
23. Ներդնել հետազոտական աշխատանքի իրականացման հստակ պահանջներ՝ կառուցվածք, գրականության ցանկ, դատողությունների և եզրակացությունների կատարում և այլն:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

24. Մշակել և գործարկել այլընտրանքային ֆինանսական միջոցների ձեռքբերման քաղաքականություն:
25. Վերազինել կաբինետները և լաբորատորիաները՝ ըստ ՄԿԾ վերջնարդյունքների պահանջների:
26. Համագործակցել այլ ՄԿՈ-ների հաստատությունների և բժշկական կենտրոնների հետ՝ ռեսուրսների համատեղ օգտագործման նպատակով:

Հասարակական պատասխանատվությունը

27. Գործարկել քոլեջի կայքէջը երկլեզու կամ եռալեզու համակարգով՝ ապահովելով քոլեջի գործունեության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն (ՌԾ, քաղաքականություններ, հաշվետվություններ, ընթացիկ աշխատանքներ և այլն) և հետադարձ կապ բաժին:
28. Բարելավել ստորաբաժանումների աշխատանքային պլանները և հաշվետվությունները, ինչպես նաև տնօրենի տարեկան հաշվետվության ձևաչափը՝ ապահովելով կապը ՌԾ նպատակների և գործողությունների հետ:
29. Մշակել արտաքին շահկիցների հետադարձ կապի ապահովման գործուն մեխանիզմներ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

30. Մշակել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների իրականացման ժամանակացույց՝ հստակ պլանավորելով ՌԾ-ում սահմանված խնդիրների գործողությունները, արդյունավետության գնահատման ցուցիչները, գործողությունների իրականացման ժամկետները և պատասխանատու անձանց՝ իրականցնելով նաև ունեցած մարդկային ռեսուրսների օպտիմալ բաշխում:

31. Մշակել համալիր վերապատրաստման ծրագիր ներքին շահակիցների օտար լեզուների բարելավման ուղղությամբ՝ ներդնելով նաև արդյունավետության գնահատման մեխանիզմներ։
32. Մշակել կարողությունների զարգացման համակարգային ծրագիր թիրախային ուղղություններով, օրինակ՝ դրամաշնորհային ծրագրերի դիմելու՝ ապահովելով հավելյալ ֆինանսական հոսքեր դեպի քոլեջ։

Որակի ներքին ապահովման համակարգը

33. Վերանայել ՈԱ աշխատանքային պլանը՝ գործողությունները սահմանելով հստակ և չափելի, նշելով համապատասխան ժամկետներ, կապակցելով ՌԾ առաջնահերթություններին և որակի ապահովման պատասխանատուի գործառույթներին։
34. Համալրել որակի ապահովման կառույցը մարդկային ռեսուրսով՝ ՈԱ գործընթացները լիարժեք իրականացնելու նպատակով։
35. Ներդնել ՈԱ գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ։
36. Մշակել և բարելավել տվյալների հավաքագրման և վերլուծման մեխանիզմները՝ ապահովելով քոլեջի գործունեության բոլոր գործընթացներում տվյալահենք որոշումների կայացմանը։
37. Ապահովել արտաքին և ներքին շահակիցների գործուն մասնակցությունը ՈԱ գործընթացներում։

Մարիամ Գևորգյան
Փորձագիտական խմբի ղեկավար

06 փետրվարի 2023թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Մարտունու պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Մարիամ Գևորգյան՝** Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, ֆիզիկայի ոլորտում փիլ. գիտությունների դոկտոր, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Հեղինե Գևորգյան՝** Երևանի պետական համալսարանի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, ավագ լաբորանտ, կենսաբանական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի անդամ:
3. **Գայանե Ղազարյան՝** Արարատի պետական բժշկական քոլեջի պրակտիկայի վարիչ, հատուկ մասնագիտական առարկաների առարկայական հանձնաժողովի նախագահ, դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
4. **Մարի Մերոբյան՝** Երևանի Հենակետային բժշկական քոլեջի «Քույրական գործ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:
Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ Անահիտ Տերտերյանը:
Փորձագիտական խմբի բոլոր անդամները ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

ՄՊԲՔ-ն պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 28.02.2022թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (22.03.2022թ.)ՄՊԲՔ–ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել ՄՊԲՔ-ի հետ: Աշխատաժողովների նպատակն է եղել քոլեջներին

նախապատրաստել ինստիտուցիոնալ հավատարմագրմանը: Աշխատաժողովները տեղի են ունեցել 2022թ. փետրվարի 21-22-ը և մարտի 3-4-ն ընկած ժամանակահատվածում, որոնց ՄՊԲՔ-ից մասնակցել է 5 աշխատակից: 4-օրյա աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները և կապը չափորոշիչների հետ: Ուսումնական հաստատությունն իրականացրել է SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ–ի պահանջներին ստուգելու նպատակով: ՄՊԲՔ–ի ներկայացրած ինքնավերլուծությունը չի համապատասխանել սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել տեխնիկական, ձևաչափային և բովանդակային թերություններ: Ինքնավերլուծությունը վերադարձվել է քոլեջին, ՄՊԲՔ-ն սահմանված ժամկետներում շտկել է թերությունները և ինքնավերլուծությունը համապատասխանեցրել ՈԱԱԿ սահմանված ձևաչափին: Ինքնավերլուծությունը ՈԱԱԿ է ներկայացվել 12.09.2022թ.:

Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 10-ն աշխատակիցների կողմից, ներգրավված են եղել դասախոսներ, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի ներկայացուցիչներ:

Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, որը երբեմն հնարավորություն չի ընձեռել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ հասկանալ և ճիշտ գնահատել քոլեջում տիրող իրական վիճակը:

Նախապատրաստական փուլ

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով: Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈՒ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, փաստաթղթերի ուսումնասիրություն[3], մասնագիտական զուգահեռ հանդիպումներ և այլն:

Նախանական այց

Հաշվի առնելով ՄՊԲՔ-ի հեռավորությունը մայրաքաղաքից՝ քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց եղանակով, 08.11.2022թ. փորձագիտական այցից մեկ շաբաթ առաջ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ համակարգողը, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը և փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Նախնական այցի ընթացքում փորձագիտական խմբի ղեկավարը, համակարգողը և ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը ներկա են գտնվել քոլեջում կազմակերպված ծնողական ժողովին:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել նոյեմբերի 14-ից նոյեմբերի 17-ն ընկած ժամանակահատվածում:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների (դասախոսական կազմ, ուսանողներ, շրջանավարտներ և այլն) մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ բաց հանդիպման: Փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում[4] և ֆոկուս խմբային հանդիպումներ: Փորձագիտական այցի

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ
[4] ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունք:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ դեկտեմբերի 22-ին: Նախնական զեկույցը ներկայացվել է ՄՊԲՔ-ին 23-ը դեկտեմբերի 2022թ. - ին: Զեկույցի վերաբերյալ իր դիտողությունները և մեկնաբանությունները ՄՊԲՔ-ը ներկայացրել է 30 հունվարի 2023թ.-ին: ՈԱԱԿ-ը կազմակերպել է ՄՈՒՀ-ի և փորձագիտական խմբի հանդիպում՝ պարզաբանելու ՄՈՒՀ-ի դիտարկումները: Հանդիպումից հետո փորձագիտական խումբը պատրաստել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 06 փետրվարի 2023թ.-ին:

_____

Անահիտ Տերտերյան
Փորձագիտական խմբի համակարգող

06 փետրվարի 2023թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը բժշկական միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություն է, որը ստեղծվել է 2002թ.-ին՝ որպես «Երևանի բազային բժշկական ուսումնարան» ՓԲԸ-ի մասնաճյուղ: ՀՀ կառավարության 2004թ. հունվարի 29-ի որոշմամբ՝ որպես ՀՀ առողջապահության նախարարության «Մարտունու բժշկական քոլեջ» ՊՈԱԿ: Քոլեջը գտնվում է Գեղարքունիքի մարզ ք.Մարտունի Նարեկացի 2/1 հասցեում՝ «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «Դ» կորպուսում:

2013թ. հունիսի 15-ից ՀՀ կառավարության որոշմամբ քոլեջը ՀՀ առողջապահության նախարարության ենթակայությունից անցել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը:

Կրթություն. Մարտունու պետական բժշկական քոլեջը բժշկական միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հատատություն է, որի գործունեության հիմնական նպատակը հասարակության կյանքի առողջապահության ոլորտի համար պետական չափորոշիչներին համապատասխան մասնագետների պատրաստումն ու քաղաքացու համակողմանի դաստիարակությունն ու ձևավորումն է:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ կրթական ծրագրերը.

1. «Քույրական գործ»,
2. «Մանկաբարձական գործ»,
3. «Դեղագործություն»,
4. «Ատամնատեխնիկական գործ»,
5. «Բժշկական կոսմետոլոգիա»:

Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում. ՄՊԲՔ-ում առկա է հետազոտական ոլորտում հետաքրքրություններ և հավակնություններ արտահայտող ռազմավարություն: Հետաքրքրությունները տարբեր են և վերաբերում են տարբեր մասնագիտական ոլորտների: Հետազոտական աշխատանքներ քոլեջում սկսել են իրականցվել 2021թ.-ից:

Հետազոտությունների իրականացումը քոլեջի ՌԾ նպատակներից է, որն իրենից ենթադրում է.

1.Հետազոտական խմբերի ձևավորում՝ հեռանկարային ուղղություններով, հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացման համար,

2. ՀՀ հետազոտական կենտրոնների հետ հետազոտական համագործակցություն, գիտության և կրթության կապի խորացում:

Արտաքին կապեր. Քոլեջը մշակել է հստակ քաղաքականություն միջազգային կազմակերպությունների և կրթական ծրագրերի հետ համագործակցության ոլորտում: Քոլեջի դասախոսները մասնակցում են Եվրոպական Կրթական Հիմնադրամի (ԵԿՀ) նախաձեռնած «Նորարար մանկավարժներ» նախագծին, որի նպատակն է աջակցել մանկավարժների

միջազգային համայնքին: Հարթակի միջոցով ապահովվում է նորարար փորձի տարածման, ճանաչման, տեսանելիության, ինչպես նաև միջազգային նախագծերին մասնակցելու, երկրի ներսում և այլ երկրների մասնագետների հետ նոր կապեր ձեռք բերելու, դասավանդման նորարար մոտեցումների մասին գիտելիքներ և փորձ ստանալու հնարավորություն:

ՄՊԲՔ-ն ակտիվորեն համագործակցում է տեղական կրթական հաստատությունների, կրթական, հասարակական, մարդասիրական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ:

Որակի ապահովում. ՄՊԲՔ-ում 2020թ.-ից ներդրվել է որակի ապահովման ներքին համակարգը, որի համար պատասխանատու է որակի ապահովման պատասխանատուն: Հաստատության հիմնական նպատակներից է միջին մասնագիտական կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի կիրառումը, ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը:

Որակի ապահովման հիմնական առաքելությունն է ապահովել քոլեջի կողմից մատուցվող ծառայությունների շարունակական բարելավումը՝ հասարակությանը մատուցելով որակյալ կրթական ծառայություններ: Քոլեջում ներդրված են և գործում են որակի ներքին ապահովման մեխանիզմներ, որոնց հիմքում ընկած են վերլուծական գործունեությունը, թափանցիկության և շարունակական բարելավման սկզբունքները: Քոլեջի որակի ներքին համակարգի աշխատանքները կազմակերպվում են ՊԻԳԲ (պլանավորել – իրականացնել – գնահատել – բարելավել) շրջափուլով, որոնց չափման առանցքներն են հասանելիությունը, համապատասխանությունը հայտարարված մարտահրավերներին, որոնք բխում են առաքելությունից:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր. `ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ՓԱՍՏԵՐ: ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ն իր առաքելությունը նկարագրել է 2022-2027թթ. ՌԾ-ում: Պետք է նշել, որ առաքելությունն իրենից ենթադրում է մի քանի էջանոց շարադրանք, որտեղ տեղ են գտել նաև քոլեջի պատմությունը, տարածաշրջանի խնդիրները, կրթական ծրագրերը և այլն: Քոլեջն առաքելության մեջ հիմնականում շեշտադրել է հետևյալը՝ «Միջին մասնագիտական ուսուցման միջոցով հանրային ծառայության համակարգը բարձր որակավորում ունեցող առողջապահական ոլորտի մասնագետներով ապահովելը»: Քոլեջը ներկայումս իրականացնում է բժշկական ոլորտի հետևյալ մասնագիտական կրթական ծրագրերը՝ «Քույրական գործ», «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ»: Իրականացվող ՄԿԾ-ները համապատասխանում են քոլեջի անվանմանը և որդեգրած առաքելությանը: Ըստ հաստատության առաքելության՝ ՄՊԲՔ-ն կրթություն է տրամադրում ՈԱՇ-ի 3-րդ և 5-րդ մակարդակերին համապատասխան՝ տրամադրելով միջին մասնագիտական կրթություն: Քոլեջը Մարտունու տարածաշրջանը սպասարկող միակ բժշկական ուսումնական հաստատությունն է:

Ներկայիս ՌԾ-ն քոլեջի ռազմավարական պլանավորման երկրորդ փորձառությունն է, առաջինը նախատեսված է եղել 2017-2022թթ. համար, իսկ ներկայինս՝ 2022-2027թթ.: Նախորդ ՌԾ-ում որպես այդպիսին չեն եղել նպատակներ և խնդիրներ, այն ներառել է միայն տվյալ ժամանակահատվածում քոլեջի իրականացրած աշխատանքների նկարագրություն և որոշ ծրագրեր, օրինակ՝

ուսանողներին ընդգրկել համապետական առողջապահական ծրագրերի իրականացման գործընթացներին:

2022-2027թթ. ՌԾ-ում քոլեջն առանձնացրել է նպատակների և խնդիրների երկու բաժին, առաջին բաժինը վերնագրված է՝ քոլեջի ռազմավարական նպատակները, խնդիրները և դրանց իրագործման միջոցառումները, երկրորդը՝ ռազմավարական ծրագրի նպատակները և խնդիրները: Առաջին բաժնում առանձնացվել են հետևյալ ինը նպատակները՝ Ռազմավարական առաքելության և նպատակների իրականացում, Կառավարում և վարչարարություն, Մասնագիտական կրթական ծրագրեր, Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, Հետազոտական աշխատանքներ, Ուսանողների օժանդակում, Ենթակառուցվածքների բարելավում, Արտաքին կապեր և միջազգայնացում, Որակի ապահովման համակարգ:

Երկրորդ բաժնում ներկայացված են հետևյալ հինգ նպատակները՝ Բարձր որակավորում ունեցող մրցունակ մասնագետների պատրաստման գործընթացի ապահովում, քոլեջի

կառավարման համակարգի բարելավում, Արտաքին կապեր և միջազգայնացում, Աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն, Որակի ապահովման համակարգի ապահովում: Վերջիններիս համար առանձնացված են խնդիրներ, գործողություններ և առաջընթացի գնահատման ցուցիչներ: Առաջին բաժնում և երկրորդ բաժնում նշված նպատակները և խնդիրները շատ հաճախ նույնն են, սակայն առկա են նաև տարբերություններ, օրինակ՝ մշակել և ներդնել հետազոտական և նորարարական, ձեռնարկատիրական աշխատանքների, լրացուցիչ ծառայությունների ներդրման հետ կապված աշխատանքների որակի ապահովման մեխանիզմներ:

Քոլեջն իր ՌԾ իրականացման ժամանակացույցը կառուցել է՝ հիմք ընդունելով առաջին բաժնում նշված ինը ռազմավարական նպատակները: ՄՊԲՔ 2022-2027թթ. ՌԾ-ում սահմանված նպատակների համար առանձնացված են մոտ հիսուն խնդիրներ, նշված նպատակները և խնդիրները գրեթե նույնությամբ տեղ են գտել ՌԾ իրականացման ժամանակացույցում, սահմանված խնդիրների համար առանձնացված չեն գործողություններ, որոնք կնախանշեն խնդիրները լուծելու ճանապարհները, բացակայում են նաև գործողությունների արդյունավետության գնահատման ցուցիչները (ԳԱՑ): Ժամանակացույցում առանձնացված են պատասխանատուներ և ժամկետներ, նշված բոլոր խնդիրների համար կատարման ժամկետներ նշված են 2022-2027թթ. կամ ամենամյա: Պատասխանատու բաժնում մի քանի ստորաբաժանման պատասխանատվություն ենթադրող խնդիրների լուծման համար պատասխանատու է միայն տնօրենը, օրինակ՝ Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ներդրում, դասախոսական անձնակազմի ակադեմիական շարժունության և միջազգային գիտատեխնիկական նախագծերում նրանց մասնակցության խթանում և այլն:

ՌԾ-ը մշակելիս քոլեջը չի իրականացրել իր ունեցած ֆինանսական հնարավորությունների գնահատում ՌԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները/ռեսուրսները հասկանալու/կանխատեսելու նպատակով:

Ըստ ինքնավերլուծության՝ ՄՊԲՔ-ն ներքին և արտաքին շահակիցների կարիքները բացահայտում է հարցումների միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականացվել են հարցումներ ուսանողների, ծնողների շրջանում, օրինակ՝ ռեսուրսներից, դասախոսական կազմի աշխատանքից բավարարվածության վերաբերյալ հարցում ուսանողների շրջանում, քոլեջի գործունեությունից բավարարվածության հարցում ծնողների շրջանում: Ուսանողների կարիքները որոշակիորեն բացահայտվում են նաև Ուսանողական խորհրդի նիստերում, որին ներկա է գտնվում նաև կազմակերպչադաստիարակչական գծով տնօրենի տեղակալը:

Դասախոսների կարիքները բացահայտվում են ամբիոնային նիստերում, որոնց մասնակցում է նաև կազմակերպչադաստիարակչական գծով տնօրենի տեղակալը, ով միևնույն ժամանակ հանդիսանում է որակի ապահովման պատասխանատուն: Գործատուների շրջանում հարցումներ տեղի չեն ունեցել, նրանց հետ հաղորդակցումն ապահովվում է հիմնականում քոլեջի տնօրենի կողմից: Գործատուների հետ տեղի են ունենում բանավոր քննարկումներ, որոնց արդյունքները չեն արձանագրվում և վերլուծվում:

Գործատուներից ոմանք ներգրավված են նաև քոլեջի Կառավարման խորհրդում, բացի այդ, քոլեջը գտնվում է Մարտունի ԲԿ-ի հարևանությամբ, որը հնարավորություն է ընձեռում քոլեջ-գործատու ընթացիկ հաղորդակցման համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուները հիմնականում կարիք ունեն բանիմաց դեղագործների և բուժքույրերի/բուժեղբայրների, որոնք տիրապետում են գործնական հմտությունների և օտար լեզուների: Այս ուղղությամբ ՄՊԲՔ-ը խնդիր է սահմանել ապահովել ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ գործողությունները դեռևս հստակ պլանավորված չեն:

ՌԾ կատարողականի գնահատման մեխանիզմ է դիտարկվում տնօրենի և ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները: Ներկայացված հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ընտրված ձևաչափերը հնարավորություն չի ընձեռում գնահատելու ՌԾ նպատակների իրականացումը: Հաշվետվություններում հղում արված չէ ՌԾ նպատակերին և դրանց իրականացմանը: Տնօրենի հաշվետվության մեջ ներկայացվում են տվյալներ այդ տարի դասավանդող դասախոսների (հիմնական, համատեղությանբ, ժամավճարով, ֆիզիոլոգիական արձակուրդում գտնվողների քանակը), կազմակերպված մեթոդական վերապատրաստումների վերաբերյալ տվյալներ և այլն: Ստորաբաժանումների հաշվետվությունները բխում են տարեկան պլաններից, վերջիններս բխում են աշխատանքային ընթացիկ գործառույթներից: Հաշվետվություններում բացակայում է վերլուծական բաղադրիչը, չեն երևում չկատարված գործողությունների պատճառները և հետագա իրականացվող քայլերը: Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ քոլեջում ՌԾ-ի գնահատման այլ մեխանիզմ ներդրված չէ: Նոր ՌԾ-ն մշակելիս նախորդ ՌԾ-ի հիմնարար վերլուծություն չի իրականցվել:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ ՄՊԲՔ-ն սահմանել է իր առաքելությունը, որը համահունչ է քոլեջի անվանմանը և ոլորտային ուղղվածությանը (բժշկական), միևնույն ժամանակ, առաքելության հստակեցումը կնպաստի շահակիցների կողմից առավել հասկանալի լինելուն և քոլեջի դերի թիրախավորմանը:
Դրական է, որ ՌԾ իրականացման նպատակով մշակվել է ժամանակացույց, այնուամենայնիվ սահմանված խնդիրների համար գործողությունների, արդյունքների արդյունավետության գնահատման ցուցիչների բացակայությունը քոլեջին հնարավորություն չի ընձեռնում գնահատել սահմանված նպատակների իրագործելիությունը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ երկակի նպատակների և խնդիրների սահմանումը կարող է շփոթության մեջ գցել ուսումնական հաստատությանը և վտանգել վերևից ներքև պլանավորումը:

Մտահոգիչ է, որ ժամանակացույցում տեղ գտած ժամկետները հստակ չեն, իսկ պատասխանատվությունների մեծ շրջանակ ենթադրող աշխատանքները դրված են միայն

մեկ անձի վրա։ Վերոնշյալը կարող է վտանգել ՌԾ նպատակների իրականացումը և աշխատակիցների գործառույթների արդյունավետ բաշխումը։

Սահմանված ՌԾ նպատակների և առկա ֆինանսական ռեսուրսների համադրությունը հնարավորություն կտա քոլեջին հասկանալու նշված բոլոր նպատակների իրականացման իրատեսականությունը ֆինանսական միջոցների առկայության պայմաններում։ Քոլեջի արտաքին և ներքին շահակիցները կարևորում են ՄՊԲՔ-ի՝ տարածաշրջանում միակ բժշկական ուսումնական հաստատություն լինելը։ Գովելի է, որ ներքին և արտաքին շահակիցների հետ քոլեջի կապը սերտ է։ Փորձագիտական խումբը նշում է, որ շահակիցների հետ ուղղորդված հաղորդակցումը կնպաստի մի շարք կարևոր դիտարկումների և առաջարկությունների որպես առաջնահերթություններ սահմանելը։

Քոլեջում ՌԾ նպատակների իրականացման հիմնական մեխանիզմ դիտարկվում են տնօրենի և ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները։ Փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվությունները դեռևս չեն կարող դիտարկվել որպես ՌԾ-ի գնահատման մեխանիզմ, քանի որ դրանք ամբողջովին չեն արտահատում ՌԾ-ի բովանդակությունը, իսկ դրանց ոչ վերլուծական, նկարագրական բնույթը կարող են վտանգել ՌԾ-ով նախատեսված վերջնական նպատակների իրագործելիությունը։

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ ՄՊԲՔ-ն ունի առանձնահատուկ նշանակություն տարածաշրջանի կարիքների բավարարման համար, ընտրված առաքելությունը և ՌԾ նպատակները համապատասխանում են ՈԱՇ-ին, ներքին և արտաքին շահակիցները որոշակիորեն ներգրավված են եղել ռազմավարական ուղղությունների մշակմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: ՄՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**։

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները։

ՓԱՍՏԵՐ: Մարտունու պետական բժշկական քոլեջը պետական ոչ առևտրային կազմակերպություն է, իր կառավարումն իրականցվում է համաձայն «Կրթության մասին»,

«Նախնական կրթության և միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների, քոլեջի կանոնադրության և իրավական դաշտը կարգավորող այլ նորմատիվ փաստաթղթերի:

Քոլեջի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը, լիազոր մարմինը, քոլեջի կառավարման խորհուրդը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

Կառավարման խորհուրդն ունի նոր կազմ, որը բաղկացած է 11 անդամից: Խորհրդում ներառված են քոլեջի ներկայացուցիչներ (2 դասախոս և 3 ուսանող), սոցիալական գործընկերներ (3), ԿԳՄՄՆ ներկայացուցիչ, ՏԻՄ ներկայացուցիչ, Միասնական սոցիալական ծառայության ներկայացուցիչ: Հարկ է նշել, որ նոր կազմում ընդգրկված են նաև նախկին ԿԽ անդամներ: Համաձայն կանոնադրության՝ ԿԽ-ն իրականացնում է տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը, քննարկում և հաստատում է նրա տարեկան հաշվետվությունները, հաստատում է քոլեջի ռազմավարական ծրագրերը և այլն: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ԿԽ անդամները մասնակցություն չեն ունեցել ՌԾ մշակման աշխատանքներին, քննարկումներին:

Քոլեջում գործում են նաև մանկավարժական, ուսումնամեթոդական և ուսանողական խորհուրդները: Կառավարչական գործընթացները կազմակերպելու համար քոլեջը մշակել և գործածություն մեջ է դրել հիմնական փաստաթղթերը, որոնք մեծ մասամբ մշակվել են վերջին երկու տարիների ընթացքում, մասնավորապես՝ տարբեր ստորաբաժանումների կանոնակարգեր, ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգ, հարցումների անցկացման կարգ, էթիկայի հանձնաժողովի, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման կարգ և այլն:

Կառավարման համակարգի համակողմանի վերլուծությունը քոլեջի ՌԾ-ով սահմանված է որպես խնդիր, որի լուծման պատասխանատուն ԿԽ-ն է: Ե՛վ ժամանակացույցի ուսումնասիրությունը, և՛ ԿԽ անդամների և ղեկավար կազմի հետ հանդիպումները հնարավորություն չտվեցին փորձագիտական խմբի անդամներին հասկանալու, թե գործընթացներն ինչպես են իրականանալու և ինչ գործիքակազմով:

Քոլեջն իր կրթական գործընթացները կազմակերպելու համար հիմնականում ունի մարդկային ու որոշակի նյութական ռեսուրսներ: ՌԾ-ում արտաքին կապերը և միջազգայնացումը դիտարկվում են առաջնահերթություն, սակայն պատասխանատվությունը դրված է մեկ անձի վրա (տնօրեն): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջազգային գործընկերների հետ հաղորդակցումն իրականանում է թարգմանչի օգնությամբ: Որակի ապոհվման գործընթացները նույնպես ՌԾ նպատակ են, իսկ որակի ապահովման հաստիքը զբաղեցված է 0.5 դրույքով, պատասխանատուն նաև կազմակերպչադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն է, դասախոս և ընդունող հանձնաժողովի քարտուղար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս պաշտոնների համատեղումն առաջացնում է գերծանրաբեռնվածություն:

Ինչ վերաբերում է նյութատեխնիկական ռեսուրսային բազային, ապա քոլեջը ներկայումս ունի ռեսուրսի խնդիր, ինչը ձգտում է լուծել հիվանդանոցի հետ

համագործակցությամբ: Քոլեջի եկամուտները ձևավորվում են պետական ֆինանսավորումից և վճարովի համակարգում սովորող ուսանողների վարձավճարներից: Վերջին տարիներին վճարովի սովորող ուսանողների թվաքանակի ավելացմանը զուգընթաց ավելացել են նաև բյուջեի եկամուտները:

Քոլեջն իր առջև խնդիր է դրել սպառողական բյուջեից անցում կատարել զարգացման բյուջեի, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նշյալի շրջանակում քոլեջը վերջին հաշվով միտված է բարձրացնելու աշխատակիցների աշխատավարձերը: Հարկ է նշել, որ քոլեջի ծախսերի գերակշիռ մասն ընթացիկ ծախսերն են՝ կազմելով ընդհանուր ծախսերի շուրջ 88.7%-ը: ՌԾ-ով սահմանված քոլեջի զարգացմանը միտված նպատակադրումների ամբողջական իրականացման համար մնացյալ ծախսերի չափը խիստ սահմանափակ է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը վեր է հանել նշյալ խնդիրը և փորձում է գտնել այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրներ, օրինակ՝ ծրագրավորված է քոլեջի կողմից հավաքված և փաթեթավորված դեղաբույսերն արտահանել Գերմանիայի Դաշնություն և Ֆրանսիայի Հանրապետություն: Ներկայումս գործընթացը բանակցային փուլում է, հստակ արդյունքներ արձանագրված չեն, չկան հիմքեր:

Դասախոսների և ուսանողների մասնակցությունը իրենց առնչվող որոշումների կայացմանը կանոնակարգված է քոլեջի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով: Ուսանողները և դասախոսները ներգրավված են քոլեջի կոլեգիալ բարձրագույն կառավարման մարմնում՝ Կառավարման խորհրդում: Կառավարման խորհուրդը նոր է ձևավորվել, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները խորհրդում դեռևս չեն հասցրել ակտիվություն դրսևորել, լիարժեք չեն պատկերացնում Խորհրդում իրենց դերը: Ուսանողական կազմերն իրենց առնչվող որոշումներին կարող են մասնակցություն ունենալ նաև Ուսանողական խորհրդում (ՈՒԽ), իսկ դասախոսները՝ մանկավարժական խորհրդում և ամբիոնային նիստերում: Մանկավարժական խորհրդում և ամբիոնային նիստերում հիմնականում քննարկվում են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցեր՝ ՊԿՉ-ների տեղայնացում, ուսումնական պլանների կազմում և այլն:

ՄՊԲՔ-ում իրականացվում են երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումներ: ՄՈՒՀ-ի երկարաժամկետ պլանավորումը դիտարկվում է ՌԾ իրականացման ժամանակացույցը, որն ունի որոշակի խնդիրներ կապված ժամկետների հստակության, պատասխանատվությունների բաշխման հետ, ինչպես նաև բացակայում են գնահատման արդյունավետության ցուցիչները:

Կարճաժամկետ պլանավորումներ իրականացվում են ամբիոնների, վարչական ստորաբաժանումների և առանձին պատասխանատուների կողմից, որոնք վերաբերում են տարեկան միջոցառումներին և ընթացիկ նախատեսված գործողություններին (ուսանողներին դասագրքերով ապահովել, դասացուցակներ կազմել, միջոցառումներ իրականացնել և այլն) և ամբողջովին չեն բխում ռազմավարական պլանավորումից: Ստորաբաժանումների պլանավորումները լիովին տեսանելի չեն դարձնում ռազմավարական առաջնահերթությունները, օրինակ՝ կառավարման համակարգի համակողմանի վերլուծություն կառավարման տարբեր մակարդակներում, ռազմավարական խնդիրների

լուծման նպատակով արդյունավետության ցուցիչների ներդրում: Ընթացիկ մշտադիտարկման և գնահատման հիմնական մեխանիզմը հաշվետվություններն են, ինքնավերլուծության մեջ նույնպես նշված չէ այլ մեխանիզմ: Քոլեջում իրականացվող գործընթացները, օրինակ՝ ստորաբաժանումների աշխատանքները, չեն վերլուծվում, առկա չէ համապատասխան գործիքակազմ: Ներկայացված հաշվետվությունները վերլուծական չեն, առավել շատ փաստահենք են:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի գործունեության վրա ազդող գործոններից են՝ բնակչության արտահոսքը, դպրոցներում շրջանավարտների որակի և քանակի փոփոխությունները, աշխատաշուկայի պահանջների փոփոխությունները և այլն: Բնակչության արտահոսքի և ուսանողների քանակի կրճատման գործոնը հաշվի առնելով՝ ՄՊԲՔ-ն ուսումնասիրում է տարածաշրջանի դպրոցներում ավարտական դասարաններում սովորող ուսանողների քանակը՝ փորձելով կանխատեսել դիմորդների քանակը: Իսկ ինչ վերաբերում է դիմորդների գիտելիքների և կարողությունների ամեն տարի նվազմանը, դասախոսների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ նրանցից ոմանք փորձում են մշակել տարբեր առաջադրանքներ տարբեր մակարդակներ ունեցող ուսանողների համար:

ՄՊԲՔ-ն 2020թ.-ին իրականացրել է ռիսկերի կառավարման վերլուծություն պատերազմի և համավարակի պայմաններում: Վերլուծության մեջ հիմնականում որպես ռիսկ դիտարկվել են բժիշկ դասախոսների արտահոսքը, համավարակը, պատերազմը: Դասախոսների հոսունության ռիսկերի կառավարման համար քոլեջի ղեկավարությունը փորձում է բարձրացնել դասախոսների աշխատավարձերը, պատերազմական իրավիճակից ելնելով՝ բոլոր ՄԿԾ-ներում ավելացվել են առաջին բուժօգնություն դասընթացի ժամաքանակը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում որոշումներ կայացնելու համար ուղղորդված տվյալների հավաքագրում և վերլուծություն միշտ չէ, որ կատարվում է, օրինակ՝ համակարգային ձևով չի ուսումնասիրվում և վերլուծվում գործատուների կարիքները, ՄԿԾ-ները չեն վերանայվում իրականացված վերլուծությունների հիման վրա և այլն:

Ինչ վերաբերում է ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք իրականացմանը քոլեջի տարբեր գործընթացներում, պետք է նշել, որ քոլեջը հիմնականում գտնվում է պլանավորման և իրականացման ցիկլում, գնահատման և բարելավման որոշակի գործընթացներ նկատելի են միայն դասավանդման գործընթացում՝ հարցումներ, դասալսումներ, որի արդյունքում տեղի են ունենում որոշակի բարելավումներ: Պլանավորման փուլում նկատելի են հետևյալ խնդիրները՝ երբեմն ոչ հստակ սահմանված գործողություններ, ժամկետներ և կատարողականի գնահատման ցուցիչների սահմանում: Բոլոր գործընթացներում գնահատում ապահովելու համար առկա չեն համապատասխան գործիքակազմեր: Բարելավման գործընթացը միշտ չէ, որ հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում վերանայվել են նաև որոշ ընթացակարգեր, վերանայումների հիմնական պատճառ են հանդիսանում կրթության ոլորտը կարգավորող օրենքներում և իրավական ակտերում տեղ գտած փոփոխությունները:

Ըստ ինքնավերլուծության՝ ՄՊԲՔ-ում չեն գործում մասնագիտական կրթական ծրագրերի գնահատման մշակված հստակ մեխանիզմներ: Քոլեջի համար ՄԿԾ-ների արդյունավետությունը չափվում է ծնողների գնահատականով (բանավոր և գրավոր), գործատուների դրական բանավոր արձագանքներով, ինչպես նաև քոլեջի շրջանավարտների զբաղվածության մակարդակով:

ՄՊԲՔ կայքէջը դեռևս մշակման փուլում է: ՄԿԾ-ների հիմնական բովանդակությունը, ուսումնական պլանները, դասախոսական կազմը, գնահատման համակարգը և ՄԿԾ-ների որակի վերաբերյալ և այլ տեղեկատվություն քոլեջը չի հրապարակում: Առկա չէ նաև շրջանավարտների և նրանց հաջողությունների (լավագույն պատմությունների) վերաբերյալ տեղեկատվություն:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ձգտումները կանոնակարգելու և բարելավելու կառավարման համակարգը, ինչը կարող է նպաստել կոլեգիալ որոշումների կայացմանը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում քոլեջի կառավարման նորակազմ խորհրդի համար իրազեկման աշխատանքների իրականացումը, ինչը կնպաստի խորհրդի կողմից քոլեջի գործընթացներում լիարժեք ներգրավվածությանը: Կառավարման խորհրդի ակտիվությունը կարևոր է քոլեջի առաջիկա զարգացման համար: Դրական է, որ ՄՊԲՔ-ն վերջին տարիներին մշակել է քոլեջի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթեր, որոնք գործընթացների իրականացումը դարձնում են առավել համակարգային: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ կանոնակարգերի լիարժեք իրագործումը կնպաստի բոլոր ոլորտներում արդյունավետ գործունեությանը:

Դրական է, որ քոլեջն իր առջև խնդիր է սահմանել իրականացնելու կառավարման համակարգի համակողմանի վերլուծություններ, այնուամենայնիվ պարզ չեն այդ աշխատանքների իրականացման գործիքակազմը և գործընթացն իրականացնողների կարողությունները՝ համապատասխան գործիքների տիրապետման տեսանկյունից, որը կարող է վտանգել տվյալ գործընթացի արդյունավետ իրականացումը:

Քոլեջի ծախսերի գերակշիռ մասը ընթացիկ ծախսերն են, ՌԾ-ով սահմանված քոլեջի զարգացմանը միտված նպատակադրումների ամբողջական իրականացման համար մնացյալ ծախսերի չափը խիստ սահմանափակ է, որը վտանգում է ՌԾ իրականացումը: Այս տեսակետից կարևոր է արտաքին կապերի օգտագործմամբ այլընտրանքային ֆինանսական ռեսուրսներ ներգրավելը՝ միտված քոլեջի զարգացմանը: Փորձագիտական խումբը կարևոր է համարում քոլեջի նպատակադրումն անցում կատարել զարգացման բյուջեի և այս ուղղությամբ որոշակի քայլերը՝ միևնույն ժամանակ խրախուսելով քոլեջին լիարժեք պլանավորել ձևավորված ֆինանսական հոսքերը ի նպաստ ոչ միայն աշխատավարձերի բարձրացմանը, այլև ՌԾ-ով սահմանված այլ նպատակների իրագործմանը:

Դրական է, որ ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը, այդուհանդերձ որոշումների կայացման

գործընթացում դասախոսական կազմի և ուսանողների նախաձեռնողականության պակասը կարող է խոչընդոտել քոլեջում առկա խնդիրների բացահայտմանը և շարունակական զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը որոշակիորեն իրականացնում է արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրություն, միևնույն ժամանակ նշում, որ դրանց համակարգվածությունը և հստակ պլանավորումը հնարավորություն կտան քոլեջի ղեկավար կազմին կայացնել տվյալների վրա հիմնված որոշումներ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը նախադրյալներ է ստեղծում ռազմավարական պլանավորման համար, միևնույն ժամանակ նշում, որ ռազմավարական նպատակադրումները դեռևս լիարժեք չեն արտահայտվում ստորաբաժանումների մակարդակներում, ինչը կարող է հանգեցնել իրավիճակային կառավարման: Ռազմավարական պլանավորման տեսակետից, փորձագիտական խումբը կարևոր է համարում պլանների մշտադիտարկման մեխանիզմների կատարելագործումը, որը հնարավորություն կտա վերհանելու չիրականացված գործընթացների պատճառները և անհրաժեշտ լուծումների համար քայլերի մշակմանը: Այս տեսակետից կարևոր է նաև ՊԻԳԲ շրջափուլի որդեգրումը, որը նույնպես կնպաստի քոլեջի շարունակական ու կայուն զարգացմանը: ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության գործընթացների ոչ համակարգված և լիրաժեք իրականացումը հնարավորություն չի ընձեռնում քոլեջին հավաստի տվյալների հիման վրա գնահատելու ՄԿԾ-ների արդյունավետությունը, որն էլ կարող է վտանգել ՄԿԾ-ների համակարգային բարելավման գործընթացները:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ ՄՊԲՔ-ում ռազմավարական պլանավորումը և կառավարումն ամբողջական չեն, կարճաժամկետ պլանները լիարժեքորեն չեն բխում երկարաժամկետ պլանավորումից, գնահատված չեն քոլեջի ֆինանսական հնարավորությունները ՌԾ իրականացման համար, առկա չեն կառավարման համակարգի մշտադիտարկման մեխանիզմներ, որոշումների կայացումը չի հիմնվում տվյալների վրա, լիարժեքորեն չի գործում ՊԻԳԲ շրջափուլը, ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: ՄՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ: Մարտունու պետական բժշկական քոլեջը իրականացնում է հետևյալ 3 կրթական ծրագրերը՝ «Քույրական գործ», «Ատամատեխնիկական գործ» և «Դեղագործություն»: Գործում է նաև «Դեղագործություն» հեռակա ծրագիրը, որը մշակվել է առկա ուսուցման կրթական ծրագրի ՊԿՉ-ի հիման վրա: Անհրաժեշտ է նշել, որ քոլեջն ունի նաև լիցենզիաներ՝ իրականացնելու «Բուժական կոսմետոլոգիա» և «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրերը, նշված կրթական ծրագրերում վերջին տարիներին ընդունելություն տեղի չի ունեցել: Քոլեջի ՄԿԾ-ները համահունչ են քոլեջի առաքելությանը, որն է՝ «Միջին մասնագիտական ուսուցման միջոցով հանրային ծառայության համակարգը բարձր որակավորում ունեցող առողջապահական ոլորտի մասնագետներով ապահովելը»:

ՄԿԾ-ներն իրականացվում են հիմնական և ընդհանուր կրթության հիմքի վրա: 2021-22 ուստարվա ընթացքում քոլեջում կրթություն է ստացել մոտ 225 ուսանող, որից 201-ը առկա համակարգում, իսկ 24-ը ՝ հեռակա: 2020-2021թթ. քոլեջը անցել է մոդուլային ուսուցման բոլոր ՄԿԾ-ների շրջանակներում (2017թ.-ից իրականացրել են պիլոտային ծրագրեր):

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Դեղագործություն» ՄԿԾ-ում փոփոխություններ չեն իրականացվել, ՊԿՉ-ն նույնությամբ տեղայնացվել է: Մինչդեռ «Քույրական գործ» ՄԿԾ-ում փոփոխվել են «Քույրական գործը վիրաբուժությունում», «Քույրական գործը մանկաբուժությունում», «Համաճարակաբանություն» և «Քույրական գործը թերապիայում» մոդուլների գործնական և տեսական ժամերի հարաբերակցությունները՝ առավելություն տալով գործնական ժամերին: Հաշվի առնելով երկրում տիրող պատերազմական իրավիճակը և տարածաշրջանի առանձնահատկությունները՝ ավելացվել է «Առաջին բուժօգնություն» մոդուլի ժամաքանակը: «Ատամատեխնիկական գործ» ծրագրում նույնպես հիմնական փոփոխությունները կատարվել են ժամաքանակի ավելացման կամ պակասեցման շրջանակներում, օրինակ՝ տեսական ժամերի հաշվին ավելացվել են գործնական ժամերը, ուսանողների մոտ պրակտիկ հմտություններ ձևավորելու համար: Կատարված բոլոր փոփոխությունները քննարկվել են ամբիոններում, հավելյալ ժամաքանակները տրամադրվել են պահուստային ժամերի հաշվին:

ՊԿՉ-ներով սահմանված նախասիրական առարկաները չեն դասավանդվում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաջորդ ուսումնական տարվա ընթացքում նախատեսում են իրականացնել «Ընտանեկան կյանքի նախապատրաստում» նախասիրական առարկան «Դեղագործություն» ծրագրում: Գործատուների հետ հանդիպման ընթացքում պարզ դարձավ, որ շրջանավարտներն ունեն օտար լեզվի իմացության խնդիր տրամադրված ժամաքանակի սակավության պատճառով, այս ուղղությամբ քոլեջը ՄԿԾ-

ներում փոփոխություններ չի իրականացրել։ «Ատամնատեխնիկական գործ» ՊԿՉ-ի մոդուլային ծրագրերում առկա են ուսումնառության արդյունքներ, որոնք ներկայումս արդի չեն, օրինակ՝ բուլատների պատրաստումը։ Այս ուղղությամբ ամբիոնում իրականացվել է քննարկում, սակայն քոլեջը նախաձեռնողականություն չի հայտնել խնդիրը բարձրաձայնելու համար։ Ներկայումս բուլատների պատրաստումն ուսուցանվում է։

Մասնագիտական կրթական ծրագրերով նախատեսվում է իրականացնել ուսումնական, նախաավարտական և արտադրական պրակտիկաներ, որոնց ծրագրերը կազմվում են պրակտիկայի վարիչի կողմից։ Պրակտիկաներն ուսանողներն անց են կացնում Մարտունու ԲԿ-ում, ատամնաբուժական կլինիկաներում, ատամնատեխնիկական լաբորատորիաներում, դեղատներում։ Պրակտիկայի ծրագրերը նախապես քննարկվում են գործատուների հետ։

Քոլեջը դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հստակ քաղաքականություն չունի, մեթոդներն ընտրվում են դասախոսների կողմից՝ տվյալ մոդուլի ուսումնառության արդյունքներին համապատասխան։ Այն դեպքում, երբ տվյալ մոդուլը դասավանդում են երկու դասախոսներ, մեթոդներն ընտրվում են քննարկումների արդյունքում։ Դասավանդման մեթոդները քննարկվում են ամբիոնների նիստերում։ Ինքնավերլուծության մեջ հիմնականում նշվում են «Դասագրքերի, ուսումնառության նյութերի ուսումնասիրություն, վարժություններ, խառը ուսուցման մեթոդ» մեթոդները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասավանդման մեթոդները կարող են փոխվել՝ կախված ուսանողների խմբից և դասավանդվող թեմայից։ Դասախոսների միայն մի մասն է ուսուցանվող նյութը ներկայացնում սահիկաշարերի միջոցով, որոշ դեպքերում կիրառվում են նկարներ կամ վիդեոներ ուսուցանվող նյութն ավելի պատկերավոր բացատրելու համար։ Երբեմն վիդեո-դասերը ուղարկվում են ուսանողներին էլեկտրոնային եղանակով։

Կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացները հիմնականում դասավանդում են պրակտիկ բժիշկները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բժիշկ-մասնագետները մանկավարժական մեթոդների ընտրության և կիրառման խնդիրներ ունեն։ Քոլեջում մեթոդիստ առկա չէ, բժիշկ-դասախոսների հետ ամբիոններում կատարվել են խորհրդատվական աշխատանքներ՝ նրանց մանկավարժական, դասավանդման և ուսումնառության մեթոդներին ծանոթացնելու նպատակով։ Դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ բժիշկ-դասախոսները տեսական նյութին զուգընթաց ներկայացնում են նաև իրենց պրակտիկայում հանդիպած դեպքերը։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներին տրվող առաջադրանքներն ընտրվում և մշակվում են ըստ ՊԿՉ-ների պահանջների և ուսումնառության արդյունքների։ Ուսանողներին տրվում են անհատական առաջադրանքներ խնդիրների, ռեֆերատների, պաստառների պատրաստման ձևով։ Շատ դեպքերում ուսանողներին տրվում են կայքէջերի անուններ և օնլայն գրքեր աշխատանքներն իրականացնելու համար։ «Ֆարմակոգնոզիա» մոդուլի շրջանակներում դասախոսն ուսանողներին տրամադրում է գնահատման թերթիկներ, որտեղ ներկայացված են տարբեր դեղամիջոցների վերաբերյալ տեղեկատվություն բաց թողնված բառերով, որոնք պետք է լրացվեն ուսանողների կողմից։

«Մասնավոր դեղաբանություն» մոդուլի դեպքում գնահատման թերթիկներում ներառված են թեստային առաջադրանքներ: Այս առաջադրանքներն ապահովում են ուսանողների տեսական գիտելիքների ամրապնդմանը, իսկ խնդիրների լուծումները՝ վերլուծական մտածողության զարգացմանը: «Մանրէաբանություն» մոդուլի շրջանակներում ուսանողներին հանձնարարվում է տարբեր հարուցիչների վերաբերյալ սահիկաշարերի պատրաստում և ներկայացում, իսկ հանձնարարության ամբողջական վերլուծություններն իրականացվել են լսարաններում դասախոսների հետ քննարկման արդյունքում: Covid 19-ով պայմանավորված՝ համաճարակային իրավիճակում կրթությունը կազմակերպվել է առցանց, որի արդյունավետությունը քննարկվել է դասախոսների շրջանում: Հեռակա ուսուցմամբ ուսանողների համար ստեղծվել են և մինչ այժմ գործում են առցանց հարթակներ դասախոսների հետ անընդհատ կապ պահելու համար:

Քոլեջում առկա է «Ուսանողների ստուգարքների, քննությունների կազմակերպման, անցկացման, գնահատման և գնահատականների բողոքարկման» ընթացակարգ, իսկ ակադեմիական ազնվությունը սահմանվում է «Էթիկայի կանոնակարգում»: Ստուգարքների և ընթացիկ քննությունների գնահատումն իրականացվում է 10 միավորանոց համակարգով, տարանջատված են գնահատման համար չափանիշներ, օրինակ 9 (գերազանց) ստանալու համար ուսանողը պետք է կարողանա կատարել առաջադրանքները՝ ամբողջովին համապատասխանում է պահանջներին, իսկ 4, 5 կամ 6 (միջին, բավարար, միջինից բարձր) ստանալու համար՝ ունենում է թերություններ, բայց ամբողջությամբ համապատասխանում է պահանջներին: Պետք է նշել, որ պահանջները հստակ սահմանված չեն:

Ուսանողների գնահատումն իրականացվում է հիմնականում թեստային առաջադրանքների, բանավոր հարցումների, իրավիճակային և հաշվարկային խնդիրների ձևով, օրինակ՝ ուսանողների կողմից Ստրեպտոցիդի քսուքի 10% 25գ-ի դուրս գրման իրականացում և ստրեպտոցիդի և հիմքի քանակների հաշվարկում: «Քույրական գործ» կրթական ծրագրում մասնագիտական մոդուլներում առկա են ալգորիթմներ, որոնց միջոցով կարողանում են գնահատել ուսանողների գործնական հմտությունները, օրինակ՝ սիրտ-թոքային վերակենդանացում իրականացնելը: «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի մասնագիտական մոդուլներում գործնական հմտությունների գնահատումն իրականացվում է ատամնաշարերի պատրաստման ունակությամբ, չնայած նրան, որ ատամնաշարերը կիրառություն չեն ունենում և գնահատումն իրականանում է միայն արտաքին տեսքով: «Դեղագործություն» կրթական ծրագրում կազմակերպվում են կոնֆլիկտային դեղագործ-հաճախորդ իրավիճակային խնդիրներ և սթրես-հարցազրույցներ: Վերջինների արդյունքում ուսանողները ձեռք են բերում հմտություններ՝ դեղատներում աշխատանքի անցնելու դեպքում սպասարկելու հաճախորդներին՝ ունենալով արագ կողմնորոշման հմտություն և տրամադրելով ճշգրիտ դեղամիջոց:

Բոլոր 3 ՄԿԾ-ներում ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է բանավոր քննությամբ, քննությունների տոմսերը կազմվում են ըստ համապատասխան հարցաշարերի: Հարցաշարերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցերն առավել շատ միտված են գիտելիքների ստուգմանը: Պետք է փաստել, որ մոդուլային ծրագրերով սահմանված

ուսումնառության արդյունքներն իրենցից ներկայացնում են որոշ գործնական հմտությունների տիրապետում, մասնավորապես՝ «Դեղերի դեղատնային տեխնոլոգիա» մոդուլի շրջանակներում պահանջվում է իրականացնել տարբեր տիպի դեղեաձևերի պատրաստում, սակայն ամփոփիչ քննության ընթացքում այդ գործընթացը ներկայացվում է բանավոր։ Արդյունքում գնահատվում են հիմնականում տեսական գիտելիքները։ Գնահատումն իրականացվում է հանձնաժողովի կողմից, որի կազմում ներկա են գտնվում ամբիոնի վարիչը, դասախոսները, Կառավարման խորհրդի նախագահը, այլ քոլեջներից հրավիրված մասնագետներ և տնօրենը։ Քննությունից հետո հանձնաժողովի նախագահը ներկայացնում է հաշվետվություն, որն իր մեջ ներառում է քննական գրաֆիկը, քննության արդյունքները, եզրահանգումը և առաջարկությունները։ Օրինակ՝ «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի 2021թ.-ի պետական որակավորող հանձնաժողովը առաջարկել էր կրթական ծրագրեր շրջանակներում ընդգրկել ատամնատեխնիկական ժամանակակակից գիտելիքներ և հմտություններ, քոլեջի ատամնատեխնիկական լաբորատորիան հագեցնել ժամանակակից գործիքներով և նյութերով ու պրակտիկաներն իրականացնել տարածաշրջանում գտնվող ատամնատեխնիկական հագեցած լաբորատորիաներ ունեցող կլինիկաներում։ Քոլեջն այս տեսանկյունից գիտակցում է համապատասխան ռեսուրսների սակավությունը և նախատեսում է վերազինել կաբինետները և լաբորատորիաները։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնական պրակտիկան չի գնահատվում, իսկ ավարտական և նախաավարտական պրակտիկաները գնահատվում են պրակտիկայի վայրում պրակտիկան ընդունող մասնագետի կամ ղեկավարի կողմից։ Փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ պրակտիկայի վայրում ուսանողների մասին ստացվում են հիմնականում դրական կարծիքներ։ Պրակտիկայի գնահատումն իրականացվում է ըստ կատարված աշխատանքերում ուսանողների ներգրավվածության և ձեռք բերած մասնագիտական գիտելիքների և կարողությունների։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից եղել են գնահատականի բողոքարկման դեպքեր, որի ժամանանակ տնօրենին դիմում է գրվել, կազմվել է հանձնաժողով և կազմվել է նոր հարցատոմս։ Արդյունքում ուսանողի գնահատականը որոշվում է միայն բողոքարկման ժամանակ տրված պատասխանի հիման վրա և կարող է բարձրանալ կամ իջնել։

Քոլեջը մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակության համեմատություն այլ տեղական և միջազգային քոլեջների հետ չի իրականացրել։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մոդուլային համակարգի ներդրման հետ կապված որոշակի քննարկումներ են տեղի ունեցել Գավառի պետական բժշկական քոլեջի հետ, ինչը հիմնականում մեթոդական բնույթ է կրել, փորձել են հասկանալ մոդուլային ծրագրերի տեղայնացման առանձնահատկությունը։ Ուսանողների և դասախոսների շարժունության դեպքեր արձանագրված չեն։

Քոլեջում մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման հստակ քաղաքականություն առկա չէ։ Նախատեսվում է կազմել ՄԿԾ-ների մշակման և մշտադիտարկման ընթացակարգ։ Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում 2019թ.-ից ձևավորվել է

ուսումնամեթոդական խորհուրդ, որը հետևում է մշակված կրթական ծրագրերի համապատասխանությանը ՊԿՉ-ներին: Պետք է նշել, որ մոդուլային ծրագրերով կան նախատեսված այնպիսի վերջարդյունքներ, որոնք ուսումնական հաստատությունը չի կարողանում ապահովել, օրինակ՝ «Դեղագործություն» կրթական ծրագրում «Դեղերի գործարանային տեխնոլոգիա» մոդուլի արդյունքում գործնական հմտությունների ապահովում, տարածաշրջանում չկան դեղագործական ընկերություններ: Այս խնդրով քոլեջը դիմել է ՄԿՈՒԶԱԿ-ին, որպեսզի տվյալ մոդուլում գործնական արդյունքի ձեռքբերման համար իրականացվի փոփոխություն, սակայն պատասխան չեն ստացել:

Մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատվում է ավարտական քննությունների արդյունքների և պետական ատեստավորող հանձնաժողովի նախագահի հաշվետվությունների միջոցով: Օրինակ՝ պետական որակավորող հաձնաժողովի կողմից առաջարկվել էր ռեսուրսների բարելավում իրականացնել: Այս տեսանկյունից քոլեջը թարմացրել է «Դեղագործություն» կրթական ծրագրի որոշ մոդուլների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները: ՄԿԾ-ների բարելավման նպատակով ոչ ֆորմալ քննարկումներ են տեղի ունենում նաև ուսանողների հետ, քննարկումների արդյունքում ուսանողների առաջարկությամբ «Քույրական գործ» ծրագրում ուսումնառության նյութերը կրճատվել են, ինչպես նաև ավելացվել են գործնական ժամերը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի ՄԿԾ-ները հիմնականում համահունչ են իր որդեգրած առաքելությանը, համապատասխանում են ՊԿՉ-ներին և ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի պահանջներին: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ ՊԿՉ-ների լիարժեք տեղայնացումը և անհրաժեշտ փոփոխությունների կատարումը, որը կբխի տարածաշրջանի կարիքներից, կնպաստի աշխատաշուկայի կարիքներին համապատասխան կադրերի պատրաստմանը: Դրական է գնահատվում այն, որ որոշ դասընթացներում գործնական ժամերի ավելացումը կատարվել է ուսանողական հարցումների և ամբիոններում քննարկման արդյունքում: Այնուամենայնիվ, արտաքին շահակիցների՝ գործատուների ներգրավվածությունը ՄԿԾ-ների բարելավման գործընթացում կարող է էլ ավելի բարելավել կրթական ծրագրերը և նպաստել որակյալ և մրցունակ մասնագետների պատրաստմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ նախասիրական և ընտրովի դասընթացների ներդրումը կարող է նպաստել ուսանողակենտրոն մոտեցման ամրապնդմանը և քոլեջի ինքնավարության մեծացմանը ՊԿՉ-ների լիրաժեք տեղայնացումն ապահովելու տեսանկյունից: Այս առարկաների արդյունավետ ներդրման համար փորձագիտական խումբը կարևորում է ներքին (դասախոսներ, ուսանողներ) և արտաքին (գործատուներ և այլ գործընկերներ) շահակիցների կարիքների վերհանումը և նրանց առաջարկությունների դիտարկումը:

Չնայած նրան, որ քոլեջը դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հստակ քաղաքականություն չունի, այնուամենայնիվ դասախոսների կողմից ընտրվող մեթոդները քննարկվում են ամբիոնների նիստերում և, կախված ուսանողների բազային

գիտելիքներից, կարող են փոփոխվել: Դրական է համարվում այն, որ քոլեջը ամբիոններում կազմակերպում է բժիշկ-դասախոսների դասավանդման և ուսումնառության մեթոդների վերաբերյալ խորհրդատվություններ: Արդյունքում պրակտիկ բժիշկների կողմից գիտելիքների փոխանցումն ուսանողներին լինում է առավել արդյունավետ, որը նպաստում է ուսանողների գործնական մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողներին տրվող առաջադրանքների բազմազանությունը, ինչը նպաստում է ուսանողների ոչ միայն բուն տեսական գիտելիքների յուրացմանը, այլև վերլուծական մտածողության զարգացմանը և գործնականում գիտելիքների կիրառմանը: Անհրաժեշտ է նշել, որ ուսանողների անհատական առաջադրանքների ներկայացման արդյունքում իրականացվում են վերլուծություններ, որոնք կատարվում են դասախոսների ուղղորդմամբ:

Դրական է, որ գիտելիքների ստուգման տարբեր եղանակների առկայությունը թույլ է տալիս գնահատել ուսանողների գիտելիքները, վերլուծական կարողությունները և հմտությունները: Միևնույն ժամանակ ավարտական քննություններում իրավիճակային խնդիրների ներառումը և գործնական բաղադրիչի ստուգման ներառումը կնպաստի ուսանողների՝ սահմանված վերջնարդյունքների ձեռբերմանը:

Դրական է ուսանողների գիտելիքների գնահատման և բողոքարկման գործուն ընթացակարգի առկայությունը:

Քոլեջում գործող կրթական ծրագրերի համեմատական վերլուծությունների իրականացումն այլ քոլեջների հետ կնպաստի լավ փորձի դուրսբերմանն ու տեղայնացմանը: Չնայած նրան, որ քոլեջը մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման քաղաքականություն չունի, այնուամենայնիվ գործում է ուսումնամեթոդական խորհուրդ կրթական ծրագրերի վերանայման գործընթացների իրականացման համար: Կրթական ծրագրերի մշտադիտարկման քաղաքականությունը կբարելավեր ծրագրերը, համապատասխանությունը ժամանակակից պահանջներին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով այն, որ քոլեջում գործող մասնագիտական կրթական ծրագրերը համապատասխանում են առաքելությանը, մշակված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա, կիրառվում են դասավանդման տարբեր մեթոդներ, առկա է ուսանողներին տրվող առաջադրանքների բազմազանություն, մասնագիտական դասընթացներն իրականացվում են բժիշկ-դասախոսների կողմից, առկա է գնահատման գործուն համակարգ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: ՄՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է բավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ՓԱՍՏԵՐ: ՄՊԲՔ-ում ընդունելությունն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգի համաձայն, ՀՀ ԿԳՄՍ Նախարարի հրամանով: «Դեղագործություն», «Քույրական գործ», «Ատամնատեխնիկական գործ» առկա և «Դեղագործություն» հեռակա ուսուցման համակարգում կրթություն ստանալու համար դիմորդները հանձնում են բանավոր քննություն «Կենսաբանություն» առարկայից: Ըստ ինքնավերլուծության՝ ընդունելության գործընթացը կազմակերպվում և իրականացվում է քոլեջի ընդունող հանձնաժողովի և ընդունելության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմի կողմից:

Ինքնավերլուծության ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման հետևյալ մեխանիզմները՝ բաց դռների օրեր, մասնագիտական կողմնորոշման այցեր տարածաշրջանի տարբեր դպրոցներ (հիմնականում ուսումնական տարվա վերջում): Այցերն իրականացվում են մասնագիտական կողմնորոշման խորհրդի կողմից, որում ներառված են ուսանողները, Կարիերայի և Որակի ապահովման պատասխանատուները: Ընդունելության վերաբերյալ տեղեկատվություն է տարածվում նաև քոլեջի ֆեյսբուքյան էջում, բուկլետներում և այլ միջոցներով:

Պետք է նշել, որ ՄՊԲՔ-ն 2022թ. իրականացրել է ուսանողների հավաքագրման մեխանիզմների արդյունավետության վերլուծություն՝ իրականացնելով հարցումներ ուսանողների և ծնողների շրջանում: Հարցման արդյունքում պարզ է դարձել, որ ուսանողները քոլեջի մասին տեղեկացել են տարբեր տարիների շրջանավարտներից, հարազատներից, համագյուղացիներից, քոլեջի ֆեյսբուքյան էջից, դպրոցում իրականացված կողմնորոշիչ աշխատանքներից և այլն: Պետք է նշել, որ վերջին տարում նկատվել է դիմորդների թվի աճ՝ շուրջ 63 ուսանող նախորդ տարվա համեմատ: Ներկայումս քոլեջն ունի առկա ուսուցմամբ 201, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 24 թվով ուսանողներ:

2021թ. ՄՊԲՔ-ն ներդրել է շահակիցների կարիքների գնահատման կարգը, ըստ որի, շահակիցների կարիքների վերհանումն իրականացվում է հիմնականում հարցաթերթերի, զրույցների, փաստաթղթերի ուսումնասիրման, դիտումների և այլնի միջոցով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կարիքները հիմնականում վեր են հանվում ավագների, կուրսղեկների, ուսանողական խորհրդի և կազմակերպչադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի հետ քննարկումների միջոցով:

Քոլեջում ուսանողական խորհուրդը կազմակերպում է հանդիպումներ կուրսի ավագների հետ՝ նպատակ ունենալով վեր հանել ուսանողների ընթացիկ կարիքները և

անհրաժեշտության դեպքում նաև բարձրաձայնել կառավարման խորհրդում։ Ուսանողների հիմնական մտահոգությունը կայացել է նրանում, որ բացակայությունները լրացվել են դասերից հետո, որն անհարմարություն է ստեղծել տրանսպորտին հասնելու և տուն վերադառնալու համար։ Խնդիրը բարձրաձայնելուց հետո որոշում է կայացվել ուրբաթ օրերին դասերն ավարտել ավելի շուտ՝ ժամանակ տրամադրելով նաև բացակայությունների պարտադիր լրացմանը։

Ուսանողները դասախոսներին դիմում են ընթացիկ դասապրոցեսի հետ կապված կարիքներով, օրինակ՝ տրված թեմայի շուրջ առաջացած հարցերով, կամ որևէ դժվարությունների դեպքում։ Ուսանողները հնարավորություն ունեն դասախոսներին դիմել ինչպես առկա, այնպես էլ առցանց տարբերակով։

Կարիքների բացահայտման նպատակով ուսանողների շրջանում իրականացվում են նաև անանուն հարցումներ կարիերայի և ՈԱ պատասխանատուի կողմից։ Հարցումները կատարվում են Կարիերայի պատասխանատուի, իսկ վերլուծությունները՝ ՈԱ պատասխանատուի կողմից։ Հարցումների ընթացքում ուսանողները բարձրաձայնել են խնդիրներ կապված դասախոսների դասավանդման որակի, մեթոդների վերաբերյալ։ Վերհանված խնդիրները քննարկվում են ամբիոնի նիստերում, վերջիններս ստանում են իրենց լուծումները։

Քոլեջում չեն գործում լրացուցիչ պարապմունքներ։ Արտաքին և ներքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները կարիք ունեն օտար լեզուների զարգացման։

Ուսանողները դասախոսների կողմից կարող են հավելյալ խորհրդատվություններ ստանալ յուրաքանչյուր ուրբաթ օր՝ ժամը 12:00-ից հետո։ Նշված ժամանակահատվածում ուսանողները պարատավորվում են լրացնել նաև իրենց բացակայությունները, դասախոսները ներկայացնում են ուսանողին բաց թողնված նյութը և պատասխանում ուսանողների չհասկացված հարցերին։ Ուսանողները և դասախոսները փաստում են, որ բացակայությունների լրացման ընտրված մեթոդն արդյունավետ է, այն նպաստում է ուսանողների անհարկի բացակայությունների կրճատմանը։

Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ ուսանողներին լրացուցիչ օժանդակություն են ցուցաբերում քոլեջի 2 լաբորանտները՝ աջակցելով ուսանողներին ռեֆերատների, սահիկաշարների կազմման աշխատանքներում և անհրաժեշտության պարագայում տրամադրելով անհրաժեշտ գրականության ցանկ։ Ըստ ինքնավերլուծության տվյալների՝ ուսանողների 87%-ն օգտվում է քոլեջի տրամադրած խորհրդատվական ծառայություններից, որից 56%-ը բավարարված է դրանցից։

Քոլեջում չի գործում վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց։ Ինքնավերլուծության ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները կարող են դիմել վարչական անձնակազմին (տնօրեն, ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեններ, ամբիոնի վարիչներ և այլք) ցանկացած պահի։ Ուսանողները տնօրենին դիմել են մի շարք խնդիրներով, այդ թվում՝ ջեռուցման բարելավման, կախիչների բացակայության, տրանսպորտային վատ

պայմանների և այլնի հետ կապված հարցերով: Նշված խնդիրները ստացել են իրենց լուծումները:

Բոլոր առաջին կուրսեցիները հանդիպում են ունենում կազմակերպչադաստիարակչական գծով փոխտնօրենի հետ ուսումնական տարվա սկզբում: Ըստ ինքնավերլուծության՝ բոլոր ուսանողները տեղեկացված են վարչական անձնակազմի կողմից մատուցվող ծառայությունների մասին և դիմում են նրանց տարբեր խնդիրներով, սակայն միայն 17%-ն է բավարարված դրանցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները գոհունակ են վարչական անձնակազմի տրամադրած ծառայություններից՝ շեշտադրելով քոլեջում տիրող անմիջական միջավայրը:

ՄՊԲՔ-ում գործում է ուսանողների կարիերային նպաստող ծառայությունները կարգավորող համապատասխան մարմին: Կարիերայի կենտրոնն ունի սահմանված կանոնակարգ և աշխատանքային պլան, որը հաստատված է տնօրինության կողմից: Կարիերայի ստորաբաժանումը հստակ սահմանված ժամանակահատվածներում ներկայացնում է հաշվետվություն՝ ուսումնական տարվա վերջում տնօրենին, իսկ յուրաքանչյուր եռամսյակի վերջում՝ ԿԳՄՍ նախարարություն: Ըստ համապատասխան փաստաթղթերի՝ ստորաբաժանումն իրականացնում է ուսանողներին կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության և ուղղորդման ծառայությունների մատուցում: Ըստ փաստաթղթերի ուսումնասիրության՝ ստորաբաժանումն իրականացնում է ակտիվ միջոցառումներ, ինքնաբացահայտման սեմինարներ, բաց դասեր, ոչ ֆորմալ դասընթացներ՝ «Կարիերայի կառավարում», «Անձի ինքնագնահատում և SWOT վերլուծություն», «Ինքնակենսագրություն և հակիրճ ինքնակենսագրական» և այլն: Կարիերայի կենտրոնը համագործակցում է զբաղվածության կենտրոնի հետ շրջանավարտների հետագա զբաղվածությունն ապահովելու նպատակով:

ՄՊԲՔ-ի ֆեյսբուքյան էջում պարբերաբար հրապարակվում են հայտարարություններ աշխատանքի ընդունման, թափուր աշխատատեղերի առկայության մասին: Ըստ կարիերայի կենտրոնի տրամադրած տվյալների՝ 2022թ. շրջանավարտների մոտ 35%-ն աշխատում է իր մասնագիտությամբ, մոտ 25%-ը տոկոսը շարունակել է կրթությունը բուհերում, իսկ մնացյալը կամ չեն աշխատում, կամ էլ աշխատում են ոչ իրենց մասնագիտությամբ, իսկ 2021 թվականի տվյալներով՝ շրջանավարտների մոտ 55% են աշխատում իրենց մասնագիտությամբ, մոտ 25%-ը շարունակել է կրթությունը բուհերում, իսկ մնացյալը չեն աշխատում: Պետք է նշել, որ աշխատանքի ընդունվելու տեսանկյունից առավել շահեկան վիճակում են գտնվում «Դեղագործություն», ապա «Քույրական գործ» ՄԿԾ-ները, իսկ «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ-ում աշխատանքի ընդունման ցուցանիշներն առավել ցածր են:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի պատասխանատուն կապ է պահպանում նաև շրջանավարտների հետ և աջակցում աշխատանք գտնելու գործում: Շրջանավարտների որոշ մասին կարիերայի կենտրոնը ուղղորդել է համապատասխան գործատուների հիմնարկներ և նրանք այժմ աշխատում են իրենց մասնագիտությամբ:

Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով դասախոսական կազմի կողմից հանձնարարվում են ինքնուրույն հետազոտական

աշխատանքներ, ռեֆերատներ, հերբարիումների պատրաստում և այլն: Հետազոտական աշխատանքներում ակտիվորեն ներգրավված են «Դեղագործություն» ՄԿԾ-ի ուսանողները՝ հետազոտելով դեղամիջոցների պիտանելիության ժամկետները, դեղամիջոցներում ազդող նյութերի քանակությունը և այլն: Պետք է նշել, որ ուսանողները հետազոտական աշխատանքներ ներկայացնելիս օգտվում են հայալեզու գրականությունից:

«Դեղագործություն» ՄԿԾ-ի շրջանակներում ինքնուրույն աշխատանքների պատրաստման համար ուսումնասիրում են «Բույսերը որպես դեղահումք», «Քույրական գործ» ՄԿԾ-ից՝ «Մարդու անատոմիա», «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ-ից՝ «ատամների ընդհանուր անատոմիա» և այլն: Կատարված հետազոտական աշխատաքները ներկայացվում են բաց դասերի ընթացքում և քննարկվում դասախոսների հետ: Բաց դասերին կարող են ներկա գտնվել տարբեր կուրսերից և բաժիններից ուսանողներ ևս:

ՄՊԲՔ-ի ուսանողների իրավունքներն ու պարտականությունները սահմանված են քոլեջի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոներով:

Ըստ ՄՊԲՔ-ի ՈՒԽ կանոնադրության՝ ուսանողական խորհուրդը ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և նրա շահերը ներկայացնող բարձրագույն ընտրովի մարմին է: Ուսանողական խորհուրդն ունի կանոնակարգ, որը հաստատված է քոլեջի տնօրենի կողմից: ՈՒԽ հիմնական խնդիրներից է՝ իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին, պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները, միավորել ՄՊԲՔ ՈՒԽ-ի ջանքերը՝ ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը նպաստելու և ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական և ֆիզիկական զարգացումը խթանելու նպատակով:

Ըստ ինքնավերլուծության՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում ուսանողական խորհրդի առաջին նիստում կազմակերպչադաստիարակչական գծով փոխտնօրենը ծանոթացնում է ուսանողներին իրենց պարտականություններին և իրավունքներին: Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ ներկա ուսանողների մեծ մասը ծանոթ չեն իրենց իրավունքներին և պարտականություններին: Ուսանողական խորհուրդը բարձրացնում է ուսանողների անհանգստությունները, առաջարկները, խնդիրները և փորձում է լուծումներ գտնել, օրինակ՝ ՈՒԽ-ի ջանքերով բացակայությունների լրացման կանոնակարգում կատարվել են փոփոխություններ, դասացուցակը համապատասխանաբար կազմվել է այնպես, որ ուրբաթ օրերին դասերը կրճատվեն և բացակայությունները լրացվեն այդ օրերին՝ ապահովելով տրանսպորտի խնդրի լուծումը:

Տարածաշրջանի առանձնահատկությունից և նոր պատերազմի վտանգից ելնելով՝ ՈՒԽ-ն դիմել է տնօրենին առաջին բուժօգնության դասերը խորացված ուսումնասիրելու և ՄԿԾ-ներում եղած պահուստային ժամերը այդ մոդուլին տրամադրելու առաջարկով, առաջարկն ընդունվել է: ՈՒԽ նախաձեռնությամբ նաև փոխվել են որոշ գրատախտակներ վատ գրելու պատճառով, ներկայումս բարձրացնում են բուֆետի բացակայության խնդիրը, որը քննարկման փուլում է: Ուսանողական խորհուրդը կազմակեպում է նաև քայլարշավներ, ցուցահանդեսներ, միջոցառումներ: Ուսանողական խորհուրդը պատասխանատու է

կազմակերպչադաստիարակչական գծով փոխտնօրենին և ամեն ուսումնական տարվա վերջում ներկայացնում է հաշվետվություն:

Ուսանողական խորհուրդն ունի նաև աշխատանքային պլան, սակայն փորձագիտական խմբի այցից պարզվեց, որ ուսանողական խորհրդի անդամներն ու ուսանողները տեղյակ չէին փաստաթղթի առկայության մասին:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում դեռևս մշակված չեն հստակ մեխանիզմներ ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման համար: Պետք է նաև նշել, որ ինքնավերլուծության մեջ առկա են որոշակի տվյալներ խորհրդատվական ծառայություններից ուսանողների գոհունակության վերաբերյալ, սակայն դրանք համակարգային իրականացված և վերլուծված տվյալներ չեն: Արդյունքները հիմնականում գնահատում են ուսանողների հետ քննարկումների և աշխատանքների ժամանակ: Քոլեջում պարբերաբար անցկացվում են հարցումներ ռեսուրսների ապահովվածության, դասախոսական աշխատանքների արդյունավետության գնահատման նպատակով:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջում գործող դիմորդների հավաքագրման մի շարք մեխանիզմների առկայությունը, ինչպես նաև այդ մեխանիզմների արդյունավետության գնահատումը: Դա թույլ է տալիս քոլեջին առավել թիրախային գործունեություն ծավալել, որն էլ նպաստում է ուսանողների թվաքանակի ավելացմանը:

Փորձագիտական խմբի համար գովելի է, որ ուսանողների կարիքների վերհանման նպատակով գործում են մի շարք մեխանիզմներ, որոնք նպաստում են ուսանողների խնդիրների շատ արագ բացահայտմանը և լուծմանը: Նկատելի է կազմակերպչադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի, դասախոսների սերտ կապը ուսանողների հետ:

Դրական է, որ քոլեջում գործում են խորհրդատվական հստակ ժամեր և ուսանողների բացակայությունները լրացվում են, որը նպաստում է ինչպես ուսանողների անհարկի բացակայությունների կրճատմանը, այնպես էլ բաց թողնված գիտելիքների լրացմանը, որն էլ իր հերթին նպաստում է ուսանողների առաջընթացին: Փորձագիտական խումբն առանձնակի է նշում այս խորհրդատվական ժամերի կարևորությունն ուսանողների համար՝ շեշտադրելով բժշկական կրթության բարդությունն ու կարևորությունը: Ուսանողները խորհրդատվական նպատակով կարող են դիմել նաև լաբորանտներին, ինչը թույլ է տալիս ուսանողներին աջակցություն ստանալ հետազոտական աշխատանքների իրականացման տեսանկյունից ինչպես բովանդակային, այնպես էլ տեխնիկական առումներով: Փորձագիտական խումբը խրախուսում է, որպեսզի քոլեջը նախաձեռնի ուսանողների համար կազմակերպել օտար լեզուների հավելյալ պարապմունքներ, որը կնպաստի նրանց լեզվական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի՝ մասնագիտությանն առնչվող տեղեկատվությունը, գաղափարները բացատրելու և հանրության նեղ շրջանակներում ներկայացնելու հմտության լիարժեք իրականացմանը:

Գովելի է, որ վարչական անձնակազմը բաց է ուսանողներին ընդունելու և աջակցություն տրամադրելու տեսանկյունից: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների հետ կանոնավոր հանդիպումները կարող են նպաստել տնօրեն, վարչական անձնակազմ կապի առվել սերտացմանը և ուսանողների կողմից հնչեցված գաղափարների կուտակմանը:

Դրական է, որ ՄՊԲՔ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ՝ սեմինարներ, բաց հանդիպումներ, SWOT վերլուծություններ և այլն, որոնց ընթացքում ուսանողները կարողանում են բացահայտել իրենց ուժեղ և թույլ կողմերը, կազմել լավ ինքնակենսագրականներ և այլն, որոնք հետագայում կարող են նպաստել գործատուին առավել շահեկան տեսակետից ներկայանալուն: Փորձագիտական խումբը կարևորում է նաև այն հանգամանքը, որ ՄՊԲՔ-ում ձևավորված է շրջանավարտների բազա, որը թույլ է տալիս քոլեջին հետևելու շրջանավարտների աշխատանքային հետագծին:

Դրական է ուսանողների հետազոտական, վերլուծական հմտությունների զարգացմանը միտված հանձնարարականների տրամադրումը, նամանավանդ «Դեղագործություն» ՄԿԾ-ում, որը նպաստում է ուսանողների հետազոտական և վերլուծական կարողությունների զարգացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս ՄԿԾ-ում եղած դրական փորձը կարող է տարածվել նաև մյուս ՄԿԾ-ներում:

Քոլեջում ուսանողների իրավունքների պաշտպանությանը նպաստում է Ուսանողական խորհուրդը, որի բարձրաձայնած մի շարք խնդիրներ գտել են իրենց լուծումները, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ կազմակերպչադաստիարակչական գծով փոխտնօրենի անմիջական հովանավորության տակ գտնվելը կարող է խոչընդոտել՝ որպես ինքնավար և ինքնուրույն որոշումներ կայացնող կառույցի ձևավորումը: Քոլեջը կարիք ունի նաև գնահատելու ուսանողներին մատուցված խորհրդատվական և այլ ծառայությունները գործընթացների շարունակական բարելավումն ապահովելու նպատակով:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ ՄՊԲՔ-ում գործում են ուսանողների հավաքագրման և ընդունելության արդյունավետ մի շարք մեխանիզմներ, տարվում են ուսանողների կարիքների վերհանմանն ուղղված մի շարք գործընթացներ, ուսանողները հնարավորություն ունեն ստանալու լրացուցիչ խորհրդատվություն, արդյունավետորեն գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, որոշակիորեն իրականացվում են հետազոտական աշխատանքներ, գործում է ուսանողների կարիքները բարձրաձայնող ուսանողական կառույց, փորձագիտական խումբը գտնում է, ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: ՄՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ՓԱՍՏԵՐ: Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի ընտրությունն իրականացվում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, «Կրթության մասին», 2020թ.-ից՝ ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի համաձայն: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020թ.-ի դեկտեմբերի 24-ին N 48-Ն հրամանով հաստատված կարգով քոլեջն ընդունել է 5 դասախոս: Դասախոսներն աշխատանքի ընդունվելուց հետո անցնում են փորձնական փուլ, այնուհետև կնքվում են պայմանագրեր 3 կամ 5 տարով, ապա՝ անժամկետ: Աշխատակիցների աշխատանքից ազատումը, իրավունքները, պարտականությունները և այլ գործընթացներ կանոնակարգվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությանը համապատասխան մշակված ներքին կարգապահական կանոններով: Թափուր տեղերի վերաբերյալ հայտարարությունները դրվում են քոլեջի ֆեյսբուքյան էջում: Մասնագիտական մոդուլները դասավանդող դասախոսների մեծ մասը պրակտիկ բժիշկներ են, որոնք աշխատում են Մարտունու ԲԿ-ում, տարածաշրջանի դեղատներում և ատամնաբուժարաններում: Ըստ ինքնավերլուծության՝ դասախոսների 15%-ը գործատուներ են: Ներկա պահին քոլեջում դասավանդում են մոտ 32 դասախոսներ, որոնցից մոտ 35%-ը հիմնական աշխատողներ են, 15%-ը՝ ներքին, 30%-ը արտաքին համատեղողներ են: Դասախոսները դասավանդում են ամենաքիչը 2, ամենաշատը՝ 7 մոդուլներ (3 դեպք), որոնք մեկը մյուսի հիմքն են: Վարչական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության համար հստակ պահանջներ սահմանված չեն:

Կրթական ծրագրերի առանձին մոդուլների դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ սահմանված չեն: Դասախոսների ընտրությունն իրականացվում է ըստ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչի հիմնական կրթական ծրագրերի իրականացման պայմանների նկատմամբ պահանջների: Մասնավորապես, հաշվի են առնվում դասախոսի որակավորումը և աշխատանքային փորձը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսին աշխատանքի ընդունելիս քոլեջը կարևորում է մասնագետների պրակտիկ գիտելիքները: Այս տեսանկյունից նախապատվությունը տրվում է բժիշկ-դասախոսներին, որոնք հիմնականում դասավանդում են նեղ մասնագիտական մոդուլներ:

Քոլեջը չունի դասախոսների գնահատման հստակ քաղաքականություն, սակայն իրականացվում են որոշ գործընթացներ նրանց մասնագիտական որակների և կատարած աշխատանքի բնութագրման համար: Մասնավորապես ուսանողների շրջանում

իրականացվում են հարցումներ, որոնք պարբերական բնույթ չեն կրում։ Հարցումների վերլուծության մեջ նշվում են, թե ուսանողները որքանով են գոհ դասախոսի աշխատանքից, արդյոք դասախոսը նպաստել է ինքնուրույն աշխատանքի կատարմանը, տրվում են առաջարկներ։ Օրինակ՝ «Քույրական գործ» ծրագրում ուսանողների կողմից առաջարկվել էր ավելացնել գործնական ժամերի քանակը, կիրառել ինտերակտիվ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ։ Խնդիրը հետագայում լուծվել է։

Իրականացվում են դասալսումներ, որոնք արձանագրվում են դասալսման մատյաններում և քննարկվում են ամբիոնների նիստերում։ Հիմնականում արձանագրվում են դասապրոցեսի իրականացումը, համապատասխանեցումն օրվա դասի պլանին, ուսանողների ներգրավվածությունը, ինքնուրույն աշխատանքի կազմակերպման մեթոդները, դասընթացի ամփոփումը և ուսանողների գիտելիքների գնահատումը։ Առանձին նշվում են դասընթացի դրական և բացասական կողմերը, կատարվում են հետևություններ և տրվում առաջարկություններ։ Օրինակ՝ «Անօրգանական քիմիայի հիմունքներ» մոդուլի դասալսման արդյունքում առաջարկվել է կազմակերպել դասապրոցեսի վերապլանավորում՝ գերազանց և ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներին ժամանակի հավասար հատկացման նպատակով։ Կրկնակի դասալսում կատարելուց հետո խնդիրը լուծվել է։ Իրականացվում են նաև փոխադարձ դասալսումներ, մասնավորապես նոր ընդունված դասախոսները դասալսում են իրականացնում ավելի փորձառու դասախոսներին, և հակառակը։ Առկա են դասալսումների և բաց դասերի անցկացման գրաֆիկներ։

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի դասախոսական կազմի 20%-ն անցնում է մեթոդական վերապատրաստումներ ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2020 և 2021 թվականներին ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված «Կարողություններին միտված ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացում» ծրագրով վերապատրաստվել են 14 դասախոսներ։ Վերապատրաստումներին վերջին 3 տարվա ընթացքում մասնակցել է 19 դասախոս։ Քոլեջը անցում է կատարել մոդուլային ուսուցման, վերապատրաստված դասախոսները մոդուլային ծրագրերի հետ կապված նորամուծությունները ներկայացրել են նաև իրենց գործընկերներին։ Վերապատրաստումների համար քոլեջը էական ֆինանսական միջոցներ չի նախատեսել։ Որոշ դեպքերում փոխհատուցվել են տրանսպորտի, գիշերակացի և օրապահիկի ծախսերը։

Ըստ ինքնավերլուծության՝ պրակտիկ բժիշկ-դասախոսներն անցնում են մասնագիտական վերապատրաստումներ, ինչը կարգավորվում է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերապատրաստված բժիշկ-դասախոսները վերապատրաստումից հետո նոր գիտելիքները փոխանցում են քոլեջի դասախոսներին։ Դեռ ավելին, եթե վերապատրաստումներն իրականացվում են քոլեջում, դրանց մասնակցում են նաև այլ դասախոսներ։ Օրինակ՝ տնօրենի դիմումի համաձայն՝ այս տարի ՀՀ Առողջապահության նախարարությունը և Հայկական Կարմիր խաչը քոլեջում կազմակերպել են «Առաջին օգնության հիմունքներ» թեմայով դասընթաց, որին քոլեջից մասնակցել են 3 դասախոսներ։ Դասախոսները տվյալ մասնագիտության նորություններին

հետևում են օնլայն հարթակում: Որոշ դասախոսներ անցել են վճարովի մասնագիտական վերապատրաստումներ սեփական միջոցների հաշվին:

Քոլեջի կողմից իրականացված պարբերաբար դասալսումների արդյունքում պարզ է դարձել, որ բժիշկ-դասախոսներն ունեն մեթոդական նոր գործիքների կիրառման կարիք, որը թույլ կտա նրանց առվել արդյունավետ հաղորդակցվել դեռահասային տարիքում գտնվող ուսանողների հետ: Խնդրի լուծման նպատակով ամբիոնների վաստակաշատ դասախոսներն աշխատանքներ են իրականացրել պրակտիկ դասախոսների հետ՝ ներկայացնելով նրանց դասավանդման նոր մեթոդներ և դրանց կիրառման առանձնահատկություններ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականացված վերապատրաստումները չեն հիմնվել դասախոսների և բժիշկ-դասախոսների կարիքների վրա: ՌԾ-ում նշվում է դասախոսների օտար լեզվի իմացության անհրաժեշտությունը, որի մասին նշվեց նաև փորձագիտական այցի ընթացքում: Այս ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:

Քոլեջը կրթական ծրագրերի համար դասախոսական կազմով ապահովվածության կայունության պահպանման հստակ մեխանիզմներ չունի: Ըստ ինքնավերլուծության՝ արտագաղթի հետևանքով մասնագետների պակասի խնդիր կարող է առաջանալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռիսկը որոշակիորեն կառավարելի դարձնելու նպատակով քոլեջը ձգտում է ունենալ միևնույն մոդուլը կամ առարկան դասավանդող առնվազն երկու մասնագետ՝ ապահովելու դասախոսական կազմի կայությունը: Օրինակ՝ «Անօրգանական քիմիա», «Օրգանական քիմիա», «Անալիտիկ քիմիա», «Մանրէաբանության հիմունքներ», «Մաթեմատիկա» և այլ մոդուլների դասավանդման համար ՄՊԲՔ-ն այս պահին ունի երկու մասնագետ: Դեռ ավելին, քոլեջն ունի նաև հայոց լեզվի և ռուսաց լեզվի դասախոսների ռեզերվ: Դասախոսական կազմով ապահովվածության կայունության խնդիր է նաև դասախոսների ցածր աշխատավարձը: Այս տեսանկյունից քոլեջի հիմնական նպատակներից է բարձրացնել դասախոսների աշխատավարձը նրանց հոսունությունը կանխելու համար:

Ընդհանուր առմամբ, որպես տարածաշրջանային քոլեջ, տնօրինության ունեցած կապերի շնորհիվ ապահովվում է մասնագետների առկայությունը՝ կրթական ծրագրերի մոդուլներին համապատասխան:

Քոլեջում առկա չէ դասախոսական կազմի առաջընթացի քաղաքականություն, սակայն որոշակիորեն նման գործընթացներ իրականանում են: Մասնավորապես, եղել են լաբորանտից դասախոս և դասախոսից ուսումնական մասի վարիչ կամ դասախոսից ամբիոնի վարիչ պաշտոնների բարձրացումներ: Քոլեջում դասախոսների խրախուսումը սահմանված է ներքին կարգապահական կանոնների 8-րդ կետով, որտեղ, որպես խրախուսում, նշվում է «դրամական պարգևատրություն, պարգևատրություն՝ արժեքավոր նվերով, լրացուցիչ վճարովի արձակուրդ, կարգապահական տույժի հանում»: Մինչդեռ, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ խրախուսանքները լինում են հավաստագրերի, շնորհակալագրերի և ամբիոնի նիստում գովասանքի խոսքերով: Այս տեսանկյունից հաշվի են առնվում երկար տարիների աշխատանքը: Խրախուսման հստակ չափանիշներ մշակված չեն, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ

դասախոսներին շնորհակալագրեր հանձնվել են գիտաժողովներին կամ միջոցառումներին մասնակցելու համար, մինչդեռ, օրինակ, «Դեղագործություն» կրթական ծրագրի ուսանողների հետ կատարած հետազոտական աշխատանքի կատարման համար դասախոսները չեն խրախուսվել: Դասախոսներն ստանում են նաև 13-րդ աշխատավարձ: Խրախուսման եղանակներից է նաև այն, որ լավ արդյունքներ ունեցած դասախոսներին հաջորդ ուսումնական տարվա ընթացքում տրամադրում են առավել շատ դասաժամ: Քոլեջն ունի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ համապատասխան գործընթացների իրականացման համար: Այնուամենայնիվ, երբեմն մեկ անձի վրա դրված են չափից ավելի շատ գործառույթներ, օրինակ՝ կազմակերպչադաստիարակչական աշխատանքի գծով տնօրենի տեղակալը իրականացնում է նաև կրթության որակի պատասխանատուի գործառույթը, դասավանդում է և զբաղվում ուսանողների ընդունելության գործերով՝ որպես ընդունող հանձնաժողովի քարտուղար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման գործառույթը լիարժեք չի իրականացվում:

Քոլեջի արտաքին կապերի ստեղծման և կանոնակարգման գործընթացներն իրականացնում է տնօրենը: Քոլեջն ունի երկու լաբորանտ՝ մեկը զբաղվում է տեխնիկական հարցերով, մյուսը՝ դասընթացների ժամանակ մուլյաժների ապահովմամբ:

Դատողություններ: Մարտունու պետական բժշկական քոլեջն իր գործունեության ընթացքում կրթական ծրագրերի մոդուլների իրականացման համար կարողացել է հավաքագրել համապատասխան որակավորում, մասնագիտական գիտելիքներ և աշխատանքային փորձառություն ունեցող դասախոսական և վարչական կազմ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ դասախոսական կազմի ընտրության մրցութային կարգով ունեն արդեն աշխատող դասախոսներ: Կարգի գործարկումը հնարավորություն է ընձեռում ընտրելու անձնային և մասնագիտական բարձր որակներ ունեցող դասախոսներ: Բացի հիմնական և ներքին համատեղությամբ դասախոսական կազմից, քոլեջում դասավանդում են նաև պրակտիկ բժիշկներ և գործատուներ, ինչն ապահովում է ուսանողների պրակտիկ հմտությունների ձեռքբերումը և, հետևաբար, աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացումը: Տեսանելի են քոլեջի ջանքերը դասախոսներին օպտիմալ քանակի մոդուլներով ապահովելու ուղղությամբ, որոնք համապատասխանում են դասախոսների նեղ մասնագիտացմանը:

Չնայած նրան, որ քոլեջում առկա չեն դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող հստակ մշակված պահանջներ, փորձագիտական խումբը նկատում է, որ բացի որակավորումից և աշխատանքային փորձի առկայությունից, քոլեջը կարևորում է, որ դասախոսն ունենա պրակտիկ գիտելիքներ այն նեղ մասնագիտական մոդուլներից, որոնք դասավանդում է: Դա հնարավորություն է տալիս ուսանողին լսելու իրական բժշկական դեպքեր և դրանց լուծման տարբեր ճանապարհներ:

Չնայած նրան, որ ՄՊԲՔ-ում ներդրված չէ դասախոսների գնահատման հստակ քաղաքականություն, այնուամենայնիվ ներդրված են որոշակի մեխանիզմներ, որոնք իրենց

արդյունավետ կիրառությունն են գտել երկար տարիներ, օրինակ՝ դասալսումները, փոխադարձ դասալսումները և այլն, որոնց արդյունքում կատարվում են հետևություններ և արվում առաջարկություններ, որոնք էլ ուղղվում են դասավանդման գործընթացի որակի բարձրացմանը:

Քոլեջում իրականացվում են նաև ուսանողական հարցումներ, որոնք պարբերական բնույթ չեն կրում, այնուամենայնիվ տալիս են ընդհանուր պատկեր դասախոսներից ուսանողների բավարավածության վերաբերյալ: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս բոլոր գործընթացների կանոնակարգումը, գնահատման մեխանիզմների բազմազանեցումը և ստացված տվյալների համադրումը հնարավորություն կընձեռեն քոլեջին իրականացնելու դասախոսի համակարգային գնահատում, ինչը հիմքեր կստեղծի նաև դասավադողների աշխատանքի վերաբերյալ խրախուսման կամ առաջխաղացման տեսանկյունից, իսկ դասախոսներին հնարավորություն կտա վերլուծել և զարգացնել դասավանդման մոտեցումները և առավել թիրախային պլանավորել վերապատրաստումները:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում այն գործընթացը, որ թե՛ հիմնական դասախոսները, թե՛ բժիշկ-մասնագետները, համապատասխանաբար, մեթոդական և մասնագիտական վերապատրաստումներից հետո նորամուծությունները ներկայացնում են քոլեջի մյուս աշխատակիցներին՝ ապահովելով աշխատակիցների միջև փորձի փոխանակում: Այնուամենայնիվ, դասախոսների վերապատրաստումներն արտաքին և ներքին գնահատման արդյունքում չեն իրականացվում, ինչը կարող է վտանգել վերապատրաստման արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի ղեկավարության կողմից դասախոսների հոսունության ռիսկերի գնահատումը՝ որպես տարածաշրջանային բժշկական քոլեջ, և դրան զուգահեռ կայունության պահպանման համար որոշ գործընթացների իրականացումը՝ մասնավորապես նույն առարկաները/մոդուլները դասավանդող երկու դասախոսի առկայությունը, որը նպաստում է դասախոսի շարունակական զարգացմանը գործընկերային քննարկումների միջավայրում:

Գովելի է, որ քոլեջում առկա են մասնագիտական առաջընթացի դեպքեր, որը կարող է ձևակերպվել և դառնալ քաղաքականություն: Նման մոտեցումը նպաստում է նրան, որ ուսումնական հաստատությունն ինքն է կադրեր աճեցնում իր կարիքներին և պահանջներին համապատասխան:

Ռազմավարական նպատակների իրականացման համար քոլեջը հիմնականում ունի համապատասխան վարչական և ուսումնաօժանդակ կազմ: Այնուամենայնիվ, քոլեջի առաքելության և կրթական ծրագրերի իրականացման համար որոշ պարտականությունների անհավասարաչափ բաշխումը կարող է բացասաբար ազդել գործընթացների արդյունավետ իրականացման վրա:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ ՄՊԲՔ-ն իր կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի դասախոսական կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր,

որոնք արդյունավետորեն գործում են, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը կայուն է, կրթական գործընթացում ներգրավված են պրակտիկ բժիշկ մասնագետներ, գործում են դասախոսների գնահատման որոշակի մեխանիզմներ, առկա է նորամածությունները այլ դասախոսներին ներկայացնելու դրական մշակույթ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: ՄՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ՓԱՍՏԵՐ: ՄՊԲՔ-ն իր 2022-2027թթ. ՌԾ-ում՝ բարձր որակավորում ունեցող մրցունակ մասնագետների պատրաստման գործընթացի ապահովում նպատակում, առանձնացրել է խնդիր՝ խթանելու ուսանողների հետազոտական գործունեությունը:

ՄՊԲՔ-ն ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով 2021թ.-ից «Դեղագործություն» կրթական ծրագրում ներդրել է հետազոտական աշխատանքների իրականացումը, օրինակ՝ ուսանողները հարցումների միջոցով ուսումնասիրում են իրենց տարածաշրջանում դեղամիջոցների (Իբուպրոֆեն, Պարացետամոլ, Ինդոմետացին ազդող նյութեր պարունակող պրեպարատներ) տարածվածությունը և կիրառման սկզբունքները տարբեր հիվանդությունների ժամանակ: Հետազոտության արդյունքները ոչ ուղղորդված և համակարգված ձևով ներկայացվում են հասարակությանը՝ կողմնորոշելով նրանց դեղամիջոցների գների, ազդեցության և ընտրության հարցում:

Կրթական ծրագրի շրջանակներում ուսանողներն իրականացնում են նաև հարցումներ բնակչության շրջանում՝ հասկանալու, թե հասարակությունը դեղամիջոցների ընտրության ժամանակ ինչ սկզբունքով է առաջնորդվում (կոնկրետ երկրի արտադրություն, գնային արժեք և այլն): Հարցումների միջոցով ուսանողները նաև ուսումնասիրում են բնակչության տեղեկացվածությունը որոշակի դեղամիջոցների (Սալբուտամոլ) ցուցումների և կողմնակի ազդեցությունների վերաբերյալ: Այսպիսի հետազոտական աշխատանքների միջոցով ուսանողներն ամրապնդում են իրենց գիտելիքները դեղերի և դրանց ցուցումների, հակացուցումների վերաբերյալ: Օրինակ՝ փորձում են պարզել, թե տեղյակ է արդյոք հասարակությունը սալբուտամոլի կիրառման մասին որպես

բրոնխոլիտիկ, հակացուցումներi մասին. որ այն կարող է առաջացնել հաճախասրտություն, մկանային դող, գլխապտույտ, գլխացավ, և որ երկրի արտադրանքին են նախապատվություն տալիս գնորդները: Հետազոտության արդյունքները ներկայացվել են բաց դասերին, իսկ հաշվետվությունները՝ ամբիոնի նիստերին:

Քոլեջում հետազոտական ուղղություն է դիտարկվում դեղաբույսերի հավաքագրման և չորացման աշխատանքները: Ուսանողները հավաքում են տարածաշրջանում եղած դեղաբույսերը, տեսականորեն ուսումնասիրում և ծանոթանում դրանց բուժիչ հատկություններին, իրականացնում են փաթեթավորման և պիտակավորման աշխատանքներ: Աշխատանքների իրականացման ընթացքում ուսանողները տարբերակում են դեղաբույսերը և դրանց ազդեցությունները տարբեր հիվանդությունների ժամանակ, այս նպատակով պատրաստում են նաև հերբարիումներ (հատուկ հավաքված, չորացված և կարգաբանական մշակման ենթարկված բույսերի հավաքածու): Պետք է նշել, որ հավաքված դեղաբույսերի ազդեցության վերաբերյալ հետազոտություններ և դրանցից բխող դատողություններ չեն իրականացվում, օրինակ՝ դեղաբույսերից յուրաքանչյուրը որքան ժամանակում է ազդեցություն ունենում, տվյալ տարածաշրջանում աճած դեղաբույսերի ազդեցությունը որքանով են տարբերվում, օրինակ՝ Արարատյան դաշտում աճեցված դեղաբույսերի ազդեցությունից և այլն: Պետք է նշել, որ դեղաբույսերը հավաքվում են Գերմանիայի Դաշնություն արտահանման և վաճառքի նպատակով: Ներկայումս այս երկրների հետ իրականացվում է բանակցային գործընթաց, դեռևս չկան արձանագրված արդյունքներ:

Ուսանողների վերլուծական և ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով ուսանողներին «Դեղագործություն» ՄԿԾ-ի շրջանակներում օրգանական քիմիա մոդուլի «Հագեցած ածխաջրածիններ հոմոլոգիական շարք» թեմայի շրջանակում հանձնարարվում են ստեղծագործական աշխատանքներ, օրինակ՝ քիմիական տարրերի դասավորվածությունը հեշտությամբ ընկալելու և հիշելու նպատակով ուսանողները պատրաստում են յուրօրինակ ժամացույցներ ալկանների դասավորվածությամբ՝ դրանց բանաձևերի շարքը համապատասխանեցնելով ժամերին (օրինակ C2H6 էթանը համապատասխանում է ժամը 2-ին, C3H8 պրոպանը համապատասխանում է ժամը 3-ին և այդպես շարունակ):

Հետազոտական աշխատանքի կատարումը որոշակիորեն արտահայտված է նաև մյուս ՄԿԾ-ներում ռեֆերատների, հերբարիումների, պաստառների պարաստման տեսքով, որի շրջանակներում ուսանողներն իրականացնում են թեմաների ուսումնասիրություններ հավելյալ աղբյուրներից և ներկայացվում են բաց դասերի ընթացքում, օրինակ՝ «Քույրական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողները «Մարդու անատոմիա» մոդուլից ուսումնասիրում են «Մարսողական օրգանների անատոմիա», «Առողջ սննդակարգ» և այլ թեմաներ: Նմանատիպ աշխատանքներ իրականացվում են նաև «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում, օրինակ՝ «Ատամների ընդհանուր անատոմիա» թեմայից: Պետք է փաստել, որ այս աշխատանքներում բացակայում են ուսանողների կողմից

ներկայացված եզրակացությունները։ Աշխատանքներն իրականացնելիս մեծապես օգտվում են հայալեզու գրականությունից։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը «Քույրական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում նույնպես ցանկանում է ներդնել նախագծային-հետազոտական աշխատանքներ։ Այս պահին քոլեջը քննարկում է հնարավոր հետազոտության շրջանակը։
Դասախոսները հատուկ հետազոտական աշխատանքներ չեն իրականացնում։ ահմանափակվում են միայն ուսանողների համար ուսումնառության նյութեր պատրաստելով։
Քոլեջում իրականացվող բոլոր հետազոտական աշխատանքներն իրականցվում են ՄԿԾ-ների՝ մասնագիտական մոդուլների շրջանակներում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Դեղագործություն» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողները որոշակի հետազոտական կարողություններ ձեռք են բերում նաև պրակտիկաների ընթացքում, օրինակ՝ ուսումնասիրում են դեղատուն այցելած հիվանդների մոտ ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղամիջոցների խմբերի ազդեցությունները տարբեր հիվանդությունների ժամանակ, հետազոտություններն իրականացվել են գրավոր հարցումների միջոցով, իսկ արդյունքներն արտահայտվում են թվային տվյալների տեսքով։

Քոլեջում հետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ ներդրված չեն ինչպես դասախոսական կազմի, այնպես էլ ուսանողների համար։ Միևնույն ժամանակ քոլեջի ղեկավարությունը բանավոր խրախուսանքների տեսքով հավանություն է տալիս ՄԿԾ-ներում կատարված աշխատանքներին։

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն իր ՌԾ-ում կարևորում է ուսանողների հետազոտական գործունեության իրականացումը, ինչը կարող է նպաստել բոլոր ՄԿԾ-ների շրջանակներում ուսանողների հետազոտական, վերլուծական կարողությունների զարգացմանը։ Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ռազմավարության հետազոտական գործունեության խթանման համար հստակ պլանավորումը և խրախուսման մեխանիզմների ներդրումը կնպաստեն ոլորտի համապարփակ զարգացմանը։

Դրական է, որ վերջին մեկ տարվա ընթացքում քոլեջը փորձ է արել «Դեղագործություն» ՄԿԾ-ում ներդնել հետազոտական աշխատանքներ, որը նպաստում է ուսանողների մասնագիտական գիտելիքների խորացմանը, վավեր աղբյուրներից օգտվելու մշակույթի ձևավորմանը և վերլուծական, ստեղծագործական ու հաղորդակցական կարողությունների զարգացմանը։

Դեղաբույսերի հավաքագրման և չորացման աշխատանքներն առավելապես նպաստում են ուսանողների գիտելիքների մեծացմանը տվյալ տարածաշրջանում բույսի ճանաչման և դրա վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման տեսանկյունից։ Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտությունների արդյունքում եզրակացությունների կատարումը և դատողությունների դուրսբերումը, որպես պահանջ

սահմանելով, ուսանողներին հնարավորություն կտա ձեռքբ բերել վերլուծական կարողություններ:

Ուսանողներին տրվող ընթացիկ ստեղծագործական աշխատանքները նպաստում են ուսանողների կողմից նոր լուծումների որոնմանը և հայտնաբերմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ այսպիսի ստեղծագործական, հետազոտական առաջադրանքների մշակման լավ փորձն անհրաժեշտ է տարածել բոլոր ՄԿԾ-ներում, ինչը հնարավորություն կտա համահավասար պայմաններ ստեղծել բոլոր ՄԿԾ-ներում սովորող ուսանողների համար:

Մտահոգիչ է, որ քոլեջի դասախոսական կազմը չի զբաղվում հետազոտական աշխատանքների իրականացմամբ: Դրա իրականացումը կարող է խթանել դասախոսի կողմից միջազգային և նորարարական գաղափարների ուսումնասիրմանը և մասնագիտական զարգացմանը: Հետազոտական աշխատանքների խրախուսման քաղաքականության ներդրումը կարող է նպաստել, որպեսզի դասախոսական և ուսանողական անձնակազմը առավել մեծ ջանքեր ներդնեն հետազոտական աշխատանքներ իրականացնելու և եղածը որակապես առավել բարելավելու ուղղությամբ:

Գովելի է, որ «Դեղագործություն» ՄԿԾ-ում եղած լավ փորձը ուսումնական հաստատությունը փորձում է տարածել նաև «Քույրական գործ» ՄԿԾ-ում, որը թույլ է տալիս ենթադրելու, որ քոլեջում արդյունավետորեն գործում են լավ փորձի տարածման մեխանիզմները և ամբիոնները այդ ուղղությամբ արդյունավետորեն համագործակցում են:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ ՄՊԲՔ-ի ՌԾ-ում հետազոտական աշխատանքը սահմանված է որպես ռազմավարական խնդիր, «Դեղագործություն» ՄԿԾ-ում ներդրվել է հետազոտական աշխատանքներ իրականացանելու մշակույթը, ՄԿԾ-ների շրջանակներում ուսանողներին տրամադրվում են հետազոտական և ստեղծագործական առաջադրանքներ, փորձագիտական խումբը գտնում է, ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Փորձագիտական խումբը Մարտունու բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ՓԱՍՏԵՐ: Քոլեջն իր գործունեության և կրթական ծրագրերի իրականացման համար ունի 1042մ² մակերեսով անհատույց տրամադրված տարածք, որը գտնվում է Մարտունու բժշկական կենտրոնի շենքում: Քոլեջում կան 13 լսարաններ, որոնք նախատեսված են 20-35 ուսանողների համար: Դասընթացների իրականացման համար լսարանները մասամբ վերանորոգված են, նախատեսվում է իրականացնել շենքային պայմանների բարելավում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, Մարտունու ԲԿ-ի հարևանությամբ կառուցվում է հիվանդանոցի նոր շենքը, որը հագեցված է լինելու նորագույն սարքավորումներով, որից կարողանալու են օգտվել նաև քոլեջի ուսանողները և դասախոսները: Հեռանկարային է, որ Մարտունու ԲԿ-ի այժմյան տարածքից որոշակի հատված կտրամադրվի քոլեջին:

Ռեսուրսների դիտարկման ընթացքում պարզվեց, որ քոլեջը չունի մարզադահլիճ և մարզահրապարակ: Ֆիզկուլտուրայի դասերը իրականացվում են Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցում՝ ըստ կնքված համաձայնագրի: Քոլեջն ունի քիչ թվով կաբինետներ, որոնք ամբողջովին հագեցած չեն ՊԿՉ-ներով սահմանված անհրաժեշտ սարքերով և պարագաներով, սակայն հնարավորություն են ընձեռում ապահովելու ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքները: Առկա են որոշ մուլյաժներ, որոնց մի մասը բազմակի օգտագործված են[5], պաստառներ, որոնց մի մասը պատրաստված են ուսանողների կողմից: Որոշ կաբինետներ և լաբորատորիաներ բացակայում են, օրինակ՝ «Դեղագործություն» կրթական ծրագրի իրականացման համար բացակայում են համակարգչային, հիգիենայի կաբինետները, մանրէաբանության, անօրգանական, օրգանական, անալիտիկ քիմիայի, դեղագործական քիմիայի, բուսաբանության և ֆարմակոգնոզիայի, դեղերի դեղատնային և գործարանային տեխնոլոգիայի, դեղաձևերի պատրաստման տեխնոլոգիայի լաբորատորիաները: «Ատամնատեխնիկական գործ» ծրագրի իրականացման համար բացակայում են նյութաբանության, մեթոդական, ուսուցման տեխնիկական միջոցների, համակարգչային օպերատորական գործի կաբինտները, պոլիմերիզացիայի լաբորատորիան: «Քույրական գործ» ծրագրի համար բացակայում են համակարգչային, ընդհանուր և բժշկական հոգեբանության, մանկաբուժության, թերապիայի, վարակիչ, մաշկային և սեռավարակ հիվանդությունների, վերակենդանացման հիմունքների և ինտենսիվ թերապիայի կաբինետները, հիգիենայի և մարդու էկոլոգիայի, մանրէաբանության և իմունաբանության լաբրատորիաները: Ռեսուրսների բացակայության դեպքում վերջնարդյունքները փորձում են ապահովել վիդեոդասերի, պաստառների, նկարների միջոցով: Երբեմն կաբինետները և լաբորատորիաները միավորված են և գտնվում են մեկ

[5] Տեքստը խմբագրվել է քոլեջի առաջարկությունների և դիտարկումների քննարկման արդյունքում:

լսարանում, օրինակ՝ ռազմագիտության կաբինետը, որտեղ իրականացվում են ատամնատեխնիկական գործի, գիպսավորման գործընթացները: Քիմիայի, դեղագործության լաբորատորիաներում դրված են դասասեղաններ տեսական դասերի իրականացման համար և ապահովված չեն անվտանգության գործիքներով և սարքերով (քարշիչ պահարաններ, ավտոմատ պիպետներ և այլն): Դասասեղաններ դրված են նաև այլ լաբորատորիաներում, իսկ պարագաները և անհրաժեշտ գործիքները սակավաթիվ են: Կաբինետներից որոշների բացակայությունը լրացվում է Մարտունու բժշկական կենտրոնի և այլ գործատուների ռեսուրսների օգտագործմամբ: Եղած ռեսուրսները հիմնականում ապահովում են ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքների և գործնական հմտությունների ձեռքբերումը, օրինակ՝ «Դեղագործություն» կրթական ծրագրում ապահովում են «Ֆարմակոգնոզիա» մոդուլի ուսումնառության արդյունքները, մասնավորապես դեղաբուսական հումքի տարբերակում, տեսակավորում, փաթեթավորում, քիմիական կազմի ճանաչում, մինչդեռ Դեղերի դեղատնային տեխնոլոգիա մոդուլի շրջանակներում չի իրականացվում տարբեր դեղաձևերի պատրաստում, քանի որ քոլեջում, Մարտունու ԲԿ-ում և տարածաշրջանում (Գեղարքունիքի մարզ) բացակայում են անհրաժեշտ սարքերը և պարագաները[6]:

Քոլեջում բացակայում է բուֆետը, առկա է սեմինարների դահլիճ, որը չափերով փոքր է և միակ սենյակն է, որտեղ առկա է մեկ պրոյեկտոր և սմարթ գրատախտակ, վերջինս տեխնիկական խնդիրների պատճառով չի գործածվում:

Գրադարանում առկա է մոտ 6400 հատ դասագիրք և գեղարվեստական գրականություն, ինչպես նաև մոտ 4380 հատ մասնագիտական գրականություն (որից 374-ը անգլալեզու, 22-ը ռուսալեզու)[7]: Քոլեջը նախատեսում է ստեղծել նաև էլեկտրոնային գրադարան՝ ուսանողներին մասնագիտական գրականությամբ ապահովելու համար: Առկա է համագործակցություն տարածաշրջանի դպրոցների հետ հանրակրթական դասագրքերի տրամադրման համար: Գրքերը ուսանողները ձեռք են բերում գրադարանային քարտերի միջոցով: Ընթերցասրահը բացակայում է:

Վարչական աշխատակիցները ապահովված են համակարգիչներով և այլ էլեկտրոնային տեխնիկայով: Առկա է կահավորված նախասրահ, կաթսայատուն և ջեռուցում: Քոլեջի տարածքը ապահովված է Wi-Fi ծածկույթով:

Քոլեջի ֆինանսական միջոցները ձևավորվում են պետական բյուջեից և ուսանողների վարձավճարներից: Պետք է փաստել, որ 2018 թվականից մինչ 2022 թվականը քոլեջի բյուջեն մեծացել է շուրջ 140%-ով[8]: Ըստ ինքնավերլուծության՝ ֆինանսական միջոցների բաշխումը իրականացվում է յուրաքանչյուր տարվա սկզբին Կառավարման խորհրդի նիստում ներկայացված նախահաշվի հիման վրա: Ներկայացվում են ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվություններ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ բյուջեի պլանավորումը չի իրականացվում ըստ ՌԾ նպատակների, իսկ ֆինանսական

[6] Տեքստը խմբագրվել է քոլեջի առաջարկությունների և դիտարկումների քննարկման արդյունքում
[7] Տեքստը խմբագրվել է քոլեջի առաջարկությունների և դիտարկումների քննարկման արդյունքում :
[8] Տեքստը խմբագրվել է քոլեջի առաջարկությունների և դիտարկումների քննարկման արդյունքում :

միջոցները չեն բավարարում ՌԾ-ով սահմանված զարգացման գործընթացներն իրականացնել: Ըստ քոլեջի 2022թ.-ի նախահաշվի՝ բյուջեի մոտ 72%-ը կազմում է աշխատավարձի ֆոնդը: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման համար բյուջեից նախատեսվում է մոտ 12,6%, որից նյութերի և ապրանքների ձեռքբերման համար՝ մոտ 3,9%: Բյուջեի մնացյալ մասը բաժին է ընկնում այլ ծախսերին:

Քոլեջում առկա չէ ֆինանսական միջոցների բաշխման հստակ քաղաքականություն: Քոլեջի առաջնահերթություններից է լաբորատոր նյութերի և պարագաների ձեռքբերումը[9]: ՄԿԾ-ների իրականացման համար ընթացիկ տարում ձեռք են բերվում լաբորատոր նյութեր և պարագաներ՝ ըստ ամբիոնների կողմից ներկայացված զեկուցագրերի և պահանջագրերի: Մասնավորապես, «Ատամնատեխնիկական գործ» ծրագրի գործնական դասերի իրականացման համար ձեռք են բերվում բյուգելային պրոտեզավորման նյութեր, «Քույրական գործ» ծրագրի համար՝ կաթետերներ, ներարկիչներ և այլն: «Դեղագործություն» ծրագրի համար հատկացվում են ֆինանսական միջոցներ հայտանյութերի, տարբեր քիմիական միացությունների ձեռքբերման, ինչպես նաև հետազոտական աշխատանքների իրականացման համար:

Քոլեջում առկա ռեսուրսները հասանելի են ուսանողների և դասախոսների համար: Քոլեջը նախատեսում է բարելավել ռեսուրսները, որի համար 2022թ.-ի նախահաշվով ֆինանսական միջոցներից սահմանված է 9,1%: Ամբիոնների կողմից ներկայացվող լաբորատոր պարագաների և նյութերի ձեռքբերմամբ ապահովվում է ՄԿԾ-ների գործնական դասերի իրականացումը առկա սարքերի և այլ ռեսուրսների հնարավորության սահմաններում: Որոշ գործնական դասերի իրականացման համար օգտագործվում են նաև Մարտունու բժշկական կենտրոնի ռեսուրսները:

Արտաքին փաստաթղթաշրջանառության համար կիառվում է Mulberry էլեկտրոնային համակարգը: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Viber-ով կամ մեյլերով: Քոլեջն ունի արխիվ, որը գործում է համաձայն կանոնակարգի:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ունի բուժկետ, որտեղ իրականացվում է միայն առաջին բուժօգնություն: Բուժկետի գրանցամատյանում գրանցումները պարբերաբար չեն կատարվում, բուժքույրը միշտ չէ, որ բուժկետում է լինում: Քանի որ քոլեջը գտնվում է Մարտունու բժշկական կենտրոնի շենքում, քոլեջի դիտարկմամբ, առողջության պահպանման համար նախատեսված առանձին ծառայության կարիք չկա: Մարտունու բժշկական կենտրոնում առկա է վերելակ և թեքահարթակներ, որից կարող են օգտվել նաև հատուկ կարիքներ ունեցող ուսանողները: Ներկայումս քոլեջն ունի շարժողական խնդիր ունեցող երկու ուսանողներ, ովքեր անհրաժեշտության դեպքում օգտվում են վերելակից: Քոլեջի տարածքը տեսահսկվում է, առկա են նաև տարհանման պլաններ, կրակմարիչներ: Սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման համար միջանցքներում փակցված են ախտահանման միջոցներ: Չնայած նրան, որ քոլեջում առկա են

[9] Տեքստը խմբագրվել է քոլեջի առաջարկությունների և դիտարկումների քննարկման արդյունքում:

լաբորատորիաներ, դրանք ապահովված չեն անվտանգության պահպանման համար համապատասխան սարքավորումներով:

Քոլեջի ռեսուրսների գնահատման համար մշակվել են «Ռեսուրսների և ծառայությունների որակի գնահատման» հարցաթերթիկներ: Ըստ ինքնավերլուծության՝ ռեսուրսների ապահովվածության բավարարվածությունը ուսանողների կողմից գնահատվել է 98%, իսկ դասախոսների կողմից՝ 90%: Մինչդեռ, փորձագիտական այցի ընթացքում և՛ արտաքին, և՛ ներքին շահակիցների կողմից նշվեց ռեսուրսների սակավությունը և դրանցով հագեցվածության անհրաժեշտությունը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի շենքային պայմանների բարելավման համար կատարված աշխատանքները և այն, որ ղեկավարությունը գիտակցում է հետագա աշխատանքների, մասնավորապես՝ ռեսուրսներով ապահովվածության անհրաժեշտությունը: Չնայած նրան, որ որոշ կաբինետներում առկա չեն դիդակտիկ նյութեր, որոշ մուլյաժներ և պարագաներ, այնուամենայնիվ, ներկայումս քոլեջում առկա ռեսուրսները հնարավորություն են ընձեռում ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքների և գործնական հմտությունների բավարար ձեռքբերումը: Քոլեջը դեռևս կարիք ունի ստեղծելու, վերազինելու և համալրելու կաբինետները և լաբորատորիաները ՄԿԾ-ների արդյունքներին համապատասխան ժամանակակից սարքավորումներով և պարագաներով, որը թույլ կտա ուսանողների կրթությունը կազմակերպել ժամանակակից պահանջներին համապատասխան: Դրական է, որ պրակտիկաները և որոշ գործնական աշխատանքներն իրականացվում են Մարտունու բժշկական կենտրոնում, այնուամենայնիվ կենտրոնի՝ ռեսուրսներով հագեցվածությունը լիովին չի համապատասխանում ՄԿԾ-ներով սահմանված պահանջներին:

Փորձագիտական խումբը դրական է համարում ուսանողներին անհրաժեշտ գրականությամբ ապահովելու համար իրականացվող աշխատանքները, իսկ էլեկտրոնային գրադարանի ձևավորումը կարող է նպաստել եղած գրականության մատչելիությանը և հասանելիությանը ուսանողներին և դասախոսներին:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը նաև սեփական մարզադահլիճի և բուֆետի կարիք ունի, որը կնպաստի ուսանողական միջավայրի բարելավմանը:

Դրական է, որ վերջին տարիներին նկատվում է քոլեջի ֆինանսական միջոցների զգալի աճ, որը հնարավորություն կարող է ընձեռել լաբարատորիաների և կաբինետների բարելավման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինանսական պլանավորումը, ըստ ՌԾ նպատակների իրականացնելու պարագայում, քոլեջը կունենա առավել թիրախավորված ֆինանսական կառավարում և շարունակական բարելավում: Այս տեսակետից կարևոր է նաև, որ քայլեր ձեռնարկվեն այլ ֆինանսկան հոսքեր ներգրավելու ուղղությամբ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը նախատեսում է և ուսումնական տարվա ընթացքում ձեռք է բերում կրթական ծրագրերի ուսումառության

արդյունքներին համապատասխան քիմիական նյութեր, հայտանյութեր, որոշ պարագաներ, որոնք կիրառվում են լաբորատորիաների հնարավորության սահմաններում մասնագիտական որոշ հմտությունների ձեռքբերման և «Դեղագործություն» կրթական ծրագրում հետազոտությունների իրականացման համար:

Դրական է համարվում քոլեջում ապահով և անվտանգ միջավայրի առկայությունը, չնայած նրան, որ լաբորատորիաները ունեն որոշ սարքերի անհրաժեշտություն փորձարկումները անվտանգ իրականացնելու համար: Մասնավորապես կարևոր է նշել, որ շարժողական խնդիրներ ունեցող ուսանողները և աշխատակիցները հնարավորություն ունեն օգտվել Մարտունու բժշկական կենտրոնում գտնվող վերելակից:

Ողջունելի է ուսանողների շրջանում ռեսուրսների և ծառայությունների որակի գնահատման համար հարցումների իրականացումը: Մինչդեռ դրանց վերլուծությունը կարող է բացահայտել ռեսուրսների անհրաժեշտությունը հենց ուսումնառողների տեսանկյունից:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով այն, որ ՄՊԲՔ-ի որոշ կաբինետների և լաբորատորիաների բացակայությունը որոշակիորեն լրացվում է գործատուների ռեսուրսներով, գրադարանը ապահովված է անհրաժեշտ քանակությամբ մասնագիտական գրականությամբ, վերջին տարիներին նկատվում է ֆինանսական միջոցների աճ, ռեսուրսները ձեռք են բերվում ըստ առաջնահերթությունների և հասանելի են և՛ ուսանողների, և՛ դասախոսների համար, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը բավարարում է Չափանիշ 7-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: ՄՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ՓԱՍՏԵՐ: ՄՊԲՔ-ում առկա է որոշակիորեն ձևավորված ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ: Արտաքին հաշվետվողականության նպատակով քոլեջի տնօրենը ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում լիազոր մարմնին ընդունելության արդյունքների և դասախոսական կազմի վերաբերյալ: Կարիերայի կենտրոնը եռամսյակային հաշվետվություն է ներկայացնում լիազոր մարմնին շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ:

Ներքին հաշվետվողականության նպատակով քոլեջի ստորաբաժանումները և դասախոսները ներկայացնում են հաշվետվություններ ըստ հիերարխիկ կապերի, օրինակ՝ դասախոսները հաշվետվություն են տրամադրում ուսումնական գծով փոխտնօրենին, ստորաբաժանումների ղեկավարները՝ տնօրենին, տնօրենը՝ կառավարման խորհրդին: Հաշվետվություններ են ներկայացնում նաև պետական որակավորող հանձնաժողովի նախագահները ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ: Հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք պարունակում են նաև բարելավմանը միտված առաջարկություններ, օրինակ՝ «Քույրական գործ» ՄԿԾ-ում առաջարկվել է, որ ուսանողների ուսումնաարտադրական և նախադիպլոմային պրակտիկաներում ներառել նաև Մարտունու բժշկական կենտրոնում նոր հագեցված բուժական և ախտորոշիչ նորագույն սարքավորումների ուսումնասիրություն և կիրառում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների հաշվետվությունները համապատասխանում են կազմված աշխատանքային պլաններին, իսկ պլանները կազմվում են ելնելով ընթացիկ աշխատանքային գործառույթներից: Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ հաշվետվություններում վերլուծական բաղադրիչը բացակայում է: Տնօրենի տարեկան հաշվետվությունները փաստահենք են/(ընդունելության տվյալներ, վերապատրաստում անցած դասախոսների տվյալներ և այլն) և նույնպես չեն պարունակում վերլուծական բաղադրիչ, առկա չեն եզրահանգումներ և բարելավման քայլեր:
Քոլեջի կատարած աշխատանքները որոշակիորեն ներկայացվում են նաև ծնողական ժողովներում:

Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, որը կառավարվում է կարիերայի պատասխանատուի կողմից: Էջում հասանելի են որոշ ընթացակարգեր ընդունելութան և թափուր աշխատատեղերի մասին, ինչպես նաև որոշ տեղեկատվություն քոլեջի գործունեության մասին՝ բաց դռների օր, միջոցառումներ, սեմինարներ, ուսանողների կողմից կատարված աշխատանքներ: Պետք է փաստել, որ ֆեյսբուքյան էջին հղվող հարցերին արագ չեն արձագանքում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չի հետևում էջի հետևորդների քանակի մեծացմանը կամ նվազմանը և չի վերլուծում, թե ինչ հարցերով են հաճախ իրենց դիմում: Փաստաթղթերի թափանցիկության նպատակով դասախոսներին և ուսանողներին անհրաժեշտ փաստաթղթերը, ըստ անհրաժեշտության, տրամադրվում են վայրերի կամ էլեկտրոնային փոստերի միջոցով դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից:

Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ մշակման փուլում է գտնվում քոլեջի պաշտոնական կայքէջը, նախատեսված է աշխատանքներն ավարտին հասցնել մինչ 2023թ. հունվար ամիսը, իրականացվում են նյութերի հավաքագրման աշխատանքներ կայքէջը համալրելու նպատակով:

ՄՊԲՔ-ի հետ հնարավոր է հետադարձ կապ հաստատել Սփյուռ տեղեկատուում նշված հետադարձ կապի տվյալներով՝ հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե, և ֆեյսբուքյան էջով: Քոլեջի կրթական ծրագրերի, վարձավճարների չափի մասին հնարավոր է տեղեկատվություն ստանալ նաև «Մասնագիտական կրթության և ուսուցման» պորտալում:

Գործատուների հետ հետադարձ կապն ապահովվում է միայն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացրած հաշվետվություններով և բանավոր քննարկումներով, վերջիններս չեն արձանագրվում։

Հասարակությանը գիտելիք փոխանցելու նպատակով ՄՊԲՔ-ն 2019թ.-ից համագործակցում է Կարմիր խաչի հայաստանյան գրասենյակի հետ և հանդիսանում է Կարմիր խաչի Մարտունու տարածաշրջանի ներկայացուցիչը։ Մարտունու պետական բժշկական քոլեջի ուսանողների և դասախոսների մեծ մասը Կարմիր խաչի կամավորներ են, իսկ կազմակերպչադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը Կարմիր խաչի կամավորների համակարգողն է։

2020թ. COVID 19 համավարակի ընթացքում քոլեջի կամավորները հակահամաճարակային միջոցառումների և իրազեկման միջոցառումներ են իրականացրել Մարտունի քաղաքի բնակիչների հետ։ Համավարակի ընթացքում ուսանողները նաև աջակցել են քոլեջին՝ սնունդ բաժանելով COVID-ով հիվանդ ծերերին և միայնակներին՝ պահպանելով անվտանգության բոլոր կանոնները։

Մարտունի բժշկական կենտրոնը նաև ռեզերվային հոսպիտալ է, 2022թ. սեպտեմբերի պատերազմական իրավիճակում քոլեջի ուսանողների բարձր կուրսեցիներից ձևավորվել են կամավորական խմբեր, որոնք աջակցել են բժշկական կենտրոնի բուժանձնակազմին՝ հերթապահությունների իրականացում, վիրավորների ընդունում, տեղափոխում, խնամք, դեղատնային աշխատանքներ և այլն։ ՄՊԲՔ-ն Կարմիր խաչ կազմակերպության հետ համատեղ 2022 թվականի հոկտեմբերի 19-21-ն ընկած ժամանակահատվածում անվճար դասընթացներ է կազմակերպել տարածաշրջանի մանկապարտեզների շուրջ 24 բուժաշխատողների համար «Առաջին բուժօգնություն» թեմայով։

ՄՊԲՔ-ի «Քույրական գործ» ՄԿԾ-ի բարձր կուրսի ուսանողները՝ որպես կամավորներ, հնարավորություն ունեն կցվելու շտապօգնության մեքենաների բուժաշխատողներին և իրականացնել հիվանդներին տնայցեր։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պլանավորում է առաջին բուժօգնության և հիվանդների խնամքի իրականացման անվճար դասընթացներ իրականացնել դպրոցների ավագ դասարանների աշակերտների շրջանում։

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ Մարտունու պետական բժշկական քոլեջն ունի որոշակիորեն ձևավորված ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ։ Քոլեջում ներդրված է, ըստ հիերարխիկ կապերի ներքին հաշվետվողականության մշակույթը, միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվությունների ՌԾ-ին փոխկապակցելը և վերլուծական բաղադրիչի ուժեղացումը հնարավորություն կտան գնահատել քոլեջի իրականացրած աշխատանքների արդյունավետությունը և վեր հանել բարելավման ենթակա կողմերը, որն էլ իր հերթին կնպաստի քոլեջի հետագա զարգացումը։

Դրական է, որ պետական որակավորող հանձնաժողովի կողմից ներկայացված հաշվետվություններում առկա են նաև բարելավմանը միտված առաջարկություններ: Անհրաժեշտ է նշել, որ ավարտական հանձնաժողովների նախագահները գործատուներ են և միաժամանակ աջակցում են նշված խնդիրների լուծման գործում:

Դրական է, որ քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, որի միջոցով ուսումնական հաստատությունը կարողանում է որոշակի տեղեկատվություն տրամադրել հասարակությանն իր գործունեության մասին՝ միջոցառումներ, ընդունելություն և այլն:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի պաշտոնական կայքէջի գործարկումը հրատապ է, որը հնարավորություն կընձեռի առավել շատ տեղեկատվություն (փաստաթղթեր, գործընթացներ, փաստական տվյալներ և այլն) տրամադրել հասարակությանը և լինել վստահելի գործընկեր ինչպես տեղական միջավայրում, այնպես էլ՝ միջազգային, այս տեսանկյունից կարևորվում է երկլեզու կամ եռալեզու կայքէջի գործարկումը, նամանավանդ, որ քոլեջն ունի միջազգայնացման և միջազգային գործընկերներ գտնելու նպատակներ:

Դրական է, որ գործում են հետադարձ կապի որոշ մեխանիզմներ՝ հեռախոսահամար, էլփոստ և այլն, այնուամենայնիվ հետադարձ կապի բազմազանեցումը՝ օրինակ նոր մշակվող կայքէջում ունենալ հետադարձ կապ բաժինը, հնարավորություն կտա քոլեջին լինելու առավել հասանելի և արագ արձագանքող:

Փորձագիտական խումբը մեծապես կարևորում և դրական է գնահատում ՄՊԲՔ-ի կողմից իրականացված աշխատանքները հասարակությանը գիտելիքի փոխանցման ուղղությամբ, իրականացված աշխատանքները նպաստում են հասարակության շրջանում բժշկական գիտելիքների և կարողությունների զարգացմանը, որն այս պահին տարածաշրջանի համար ունի ռազմավարական և կենսական նշանակություն: Հատկանշական է քոլեջի ուսանողների մասնակցությունը մի շարք կամավորական աշխատանքներում, որը նպաստում է ոչ միայն գիտակից քաղաքացու ձևավորմանը, այլև՝ մասնագիտական կարողությունների զարգացմանը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով այն, որ ՄՊԲՔ-ում առկա են արտաքին և ներքին հաշվետվողականության որոշակիորեն ձևավորված համակարգ, գործում են հաշվետվողականության և հետադարձ կապի որոշակի մեխանիզմներ, իրականցվում են բուժաշխատողների համար անվճար պարապմունքներ, դասախոսական և ուսանողական համակազմը ներգրավված է մի շարք կամավորական աշխատանքներում, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը համապատասխանում է չափանիշ 8-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: ՄՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ: Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների զարգացումը Մարտունու բժշկական քոլեջի համար գերակա նպատակ է: Նպատակին հասնելու համար քոլեջն առանձնացրել է հետևյալ խնդիրները՝

- ստեղծել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր՝ մշակելով արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն եւ ընթացակարգեր,
- քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման համար մշակել կանոնակարգված գործընթաց,
- քպահովել քոլեջի արդյունավետորեն համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ,
- քոլեջում ապահովել ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:
- եվրոպական ՄԿՈՒ հաստատությունների հետ համագործակցության ձեռքբերում/ապահովում,
- ԵՄ առաջատար քոլեջների դրական փորձի ուսումնասիրում,
- այլն:

Պետք է նշել, որ նշված խնդիրների իրականացման համար պլանավորված գործողություններ, ժամկետներ և պատասխանատուներ առկա չեն:

ՄՊԲՔ-ն համագործակցում է տարածաշրջանի մի շարք գործատուների հետ՝ Մարտունի ԲԿ-ի, Մարտունու ծննդատուն, Մարտունու ատամնաբուժական պոլկլինիկա, Գեղհովիտի «Առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Խաչմեդ 3D» ստոմատոլոգիա, «Խինդ և ժպիտ» ատամնաբուժական պոլիկլինիկա, «Արամայիս Ղազարյան» ԱՁ, «Սաֆորա» ՍՊԸ և այլն: Համագործակցության շրջանակներում քոլեջն ապոհովվում է միայն ուսանողների պրակտիկաների կազմակերպումը, իսկ Մարտունի ԲԿ-ի պարագայում նաև գործնական դասերի իրականացումը (քոլեջի ռեսուրսային բազայի բացակայությունը որոշակիորեն լրացվում է բժշկական կենտրոնում): Քոլեջը համագործակցում է նաև Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոցի հետ, Գեղարքունիքի բժշկական քոլեջի, Հայկական Կարմիր Խաչի, Միասնական սոցիալական ծառայության, Եվրասիա միջազգային համալսարանի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և այլ գործընկեր կազմակերպությունների հետ: Համագործակցությունների արդյունքում ուսումնական հաստատությունը կարողանում է ուսանողների համար կազմակերպել ֆիզկուլտուրայի դասերը, ուսանողների համար ապահովել կամավորական աշխատանքներ իրականացնելու միջավայր, պայմաններ ստեղծել ուսանողների

շարունակական կրթության ապահովման համար և այլն: Պետք է փաստել, որ թույլ է կապը Քոլեջի և այլ ՄԿՈ-ների հաստատությունների միջև, դրանք սահմանափակվում են միայն որոշ զրույցներով, առկա չեն համատեղ ծրագրեր:

2022թ.-ից քոլեջը համագործակցություն է սկսել «Բիզնես և կրթություն Գործընկերություն» հիմնադրամի հետ: «Մասնագիտական կրթություն և ուսուցում համագործակցություն Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում քոլեջի տնօրենը այցելություններ է իրականացրել Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ընկերություններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, ՄՊԲՔ-ն նպատակ ունի այս ասոցիացիայի հետ համատեղ իրականացնել բիզնես ծրագիր՝ քոլեջի կողմից արտադրված դեղաբույսերի վաճառք: Ծրագիրը քննարկման փուլում է, քոլեջի տնօրենը փորձում է ձեռք բերել որոշակի պայմանավորվածություններ, դեռևս առկա չեն պլանավորումներ և ֆինանսական հաշվարկներ: Նշված ծրագրի խնդիրներից է նաև մշակել ուսանողների և աշխատակիցների շարժունության կանոնակարգ՝ ապահովելու շարժունության գործընթացը և գործընթացի թափանցիկությունը: Պետք է նշել, որ այս ուղղությամբ դեռևս գործնական քայլեր առկա չեն, քոլեջում ուսանողների և դասախոսների շարժունության դեպքեր չեն արձանագրվել: Արտաքին կապերի զարգացմանը և միջազգայնացմանն ուղղված աշխատանքներով զբաղվում է միայն տնօրենը: Իրականացվող գործընթացները դեռևս կանոնակարգված չեն: Առկա չեն համապատասխան քաղաքականություններ, ընթացակարգեր, աշխատանքային պլաններ, հաշվետվություններ:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի մի քանի դասախոսներ մասնակցում են Եվրոպական Կրթական Հիմնադրամի (ԵԿՀ) նախաձեռնած «Նորարար մանկավարժներ» նախագծին: Առցանց հարթակի միջոցով տարբեր երկրների մանկավարժները հնարավորություն են ունենում ներկայացնելու իրենց նորարական փորձը և իրականացնել փորձի փոխանակում: Նախագծի աշխատանքային լեզուն եղել է անգլերենը: Փորձագիտական այցի ընթացում փորձագիտական խմբին չհաջողվեց դուրս բերել այնպիսի փոփոխությունների օրինակներ՝ դասավանդման, գնահատման մեթոդների և այլն, որոնք իրականացվել էին քոլեջում այդ նախագծին մասնակցության արդյունքում:

Ըստ ինքնավերլուծությունում նշված տվյալների՝ վարչական և դասավանդող անձնակազմի 100 տոկոսը տիրապետում է ռուսերենին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների շրջանում օտար լեզուների (ռուսերեն, անգլերեն) իմացության մակարդակը շատ ցածր է, դրա մասին փաստեցին նաև արտաքին շահակիցները: Դասախոսներից շատ քիչ տոկոսը տիրապետում են անգլերենի, ինքնավերլուծության մեջ այս ուղղությամբ հստակ տվյալներ ներկայացված չեն: ՄՊԲՔ-ը 9-րդ չափանիշի SWOT վերլուծությունում օտար լեզուների իմացությունը դիտարկել է թույլ կողմ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները քոլեջի համար զարգացման առաջնային ուղղություններից է համարվում, այդուհանդերձ գործընթացների ոչ

պլանավորված լինելը վտանգում է նշված խնդիրների իրականացումը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ նշված ծավալի խնդիրների լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է հստակ պլանավորում և պասխանատվությունների բաշխում՝ ըստ աշխատակիցների ներուժի:

Դրական է, որ տեղական միջավայրում քոլեջը ձևավորել է արտաքին կապեր մի շարք գործատուների, գործընկեր կազմակերպությունների հետ, որոնց հետ համագործակցության շրջանակներում հնարավոր է դառնում ուսանողների պրակտիկաների կազմակերպումը, հատկանշական է, Մարտունի ԲԿ-ի հետ համագործակցությունը, որը հնարավորություն է ընձեռում նաև որոշակիորեն մեղմել քոլեջի ռեսուրսային սակավությունը: Փորձագիտական խումբը նաև նշում է, որ չնայած առկա են մի շարք տեղական կապեր, այնդուհանդերձ համագործակցության շրջանակը սահմանափակվում է միայն ընթացիկ հարցերին լուծումներ տալով, քոլեջի ապագային և զարգացմանը միտված աշխատանքներ չեն իրականացվում:

Դրական հանգամանք է, որ քոլեջը 2022թ.-ից սկսել է իրականացնել միջազգայնացմանը միտված որոշակի գործընթացներ, սակայն դրանք դեռևս նախնական փուլում են, ներկայումս արդյունավետության կամ ոչ արդյունավետության մասին խոսելը վաղ է: Քոլեջի դասախոսներից ոմանք մասնակցում են «Նորարար մանկավարժներ» նախագծին, որը հնարավորություն է ընձեռում ուսումնական հաստատությանը ծանոթանալ այլ երկրների մանկավարժների ունեցած դրական փորձին, այնուամենայիվ դեռևս առկա չեն հիմքեր, թե այդ նախագծի արդյունքում ինչպիսի դրական փորձառություն են ստացել մասնակիցները և ինչպես են այդ փորձառությունն օգտագործելու իրենց պրակտիկայում:

Դրական է, որ դասախոսները տիրապետում են ռուսերեն լեզվին, որը կարող է հնարավորություն ընձեռել որոշակի համագործակցության շրջանակ սկսել հետխորհրդային երկրների հետ, այնուամենայնիվ այդ ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել քոլեջի կողմից: Դասախոսական կազմից մի քանիսը տիրապետում են նաև անգլերենի, սակայն նրանց կարողություններն այս պահին լիարժեք չեն օգտագործվում, դա է փաստում նաև այն, որ միջազգայնացման գործընթացները թողնված են մեկ անձի պատասխանատվության ներքո: Ուսանողների և դասախոսների մոտ օտար լեզուների իմացության մակարդակը շատ ցածր է, որ կարող է խոչընդոտել մասնագիտական կարողությունների լիարժեք ձևավորմանը և հետագյում ուսանողների շարժունության ապահովմանը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ արտաքին կապերը և միջազգայնացումն գործընթացները գործընթացները պլանավորված չեն, առկա չէ միջազգայնացմանն ուղղված քաղաքականություն, առկա է օտար լեզվի (անգլերեն միայն դասախոսներ) իմացության ցածր մակարդակ և ուսանողների, և դասախոսների շրջանում, տեղական միջավայրում ունեցած արտաքին կապերը չեն ապահովում քոլեջի առաջանցիկ զարգացում, առկա է արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների համակարգման խնդիր, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը չի բավարարում Չափանիշ 9-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Փորձագիտական խումբը Մարտունու բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՓԱՍՏԵՐ: Որակի ապահովման համակարգը քոլեջում ներդրվել է 2020թ.-ից: 30.11.2021թ. հաստատվել է Որակի ապահովման կանոնակարգը, ինչի հիման վրա իրականացվում են ՈԱ աշխատանքները: Համաձայն քոլեջի ՈԱ կանոնակարգի՝ ՈԱ համակարգի ներդրման նպատակներն են.

- նպաստել ՈԱ մշակույթի ձևավորմանը,
- ապահովել քոլեջի հաշվետվողականությունը շահակիցների առջև,
- ապահովել որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև կապը:

ՈԱ պատասխանատուն անմիջականորեն ենթարկվում է տնօրենին:

Մարտունու պետական բժշկական քոլեջում 2020թ. -ից գործում է ՈԱ պատասխանատուի հաստիքը, որը զբաղեցված է 0.5 դրույքով: ՈԱ պատասխանատուների համար, որպես այդպիսին, առանձնացված չէ աշխատանքային միջավայր՝ աշխատասենյակ, համակարգիչ և այլն: ՄՊԲՔ-ում ՈԱ պատասխանատուն միևնույն ժամանակ դասախոս, ընդունող հանձնաժողովի քարտուղար և կազմակերպչադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ է, վերջինիս համար առանձնացված է առանձին աշխատասենյակ, անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ, որոնք կիրառվում են նաև ՈԱ աշխատանքներն իրականացնելու նպատակով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ պատասխանատուն օգնականի կարիք ունի, քանի որ մի քանի պաշտոնների համատեղումն առաջացնում է գերբեռնվածություն: Այս պահին հարցումների իրականացման աշխատանքներում համագործակցում է Կարիերայի պատասխանատուի հետ, հարցումներն իրականացվում են Կարիերայի պատասխանատուի կողմից, իսկ վերլուծությունները՝ ՈԱ պատասխանատուի:

Որակի ապահովման աշխատանքներն իրականացվում են համաձայն աշխատանքային պլանի: 2021-2022թթ. տարեկան աշխատանքային պլանում առանձնացված

են հետևյալ բաժինները՝ աշխատանքի բովանդակություն, կատարող, ժամկետներ և նշումներ։ Աշխատանքի բովանդակության մեջ առանձնացված են 11 աշխատանքներ, որոնցից են՝ որակի ներքին ապահովման գործընթացների մշակում, իրականացում և մշտական բարելավում, որակի ներքին չափանիշների և չափորոշիչների սահմանում, ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերի մշակում, ՈԱ գործընթացների իրականացում և համակարգում, քոլեջի շրջանավարտների համար աշխատաշուկայում պահանջարկ ունեցող գիտելիքների և հմտությունների ապահովում, կրթության որակի շարունակական բարելավման խթանում և այլն։ Պետք է փաստել, որ աշխատանքային բովանդակությունում սահմանված քայլերը երբեմն չեն համապատասխանում ՈԱ պատասխանատուի գործառույթներին, օրինակ՝ քոլեջի շրջանավարտների համար աշխատաշուկայում պահանջարկ ունեցող գիտելիքների և հմտությունների ապահովում, երբեմն էլ նկարագրությունն այնքան լայն է, որ տեսանելի չի դառնում սպասվելիք գործողությունը, օրինակ՝ կրթության որակի շարունակական բարելավման խթանում։ Աշխատանքային պլանի ժամկետ բաժնում ժամկետներ նշված չեն, իսկ ՈԱ պատասխանատուն նշված է որպես սահմանված բոլոր աշխատանքների միակ պատասխանատու։

2020-2021, 2021-2022 թվականների տարեկան հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այս 2 տարիների ընթացքում հիմնականում մշակվել են մի շարք փաստաթղթեր՝ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի պրակտիկայի կազմակերպման անցկացման կանոնակարգ, «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսման վարձի սահմանման, վճարման և վերադարձման ընթացակարգ, «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի բացակայած ուսանողների բացակա դասաժամերի լրացման ընթացակարգ, ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման հարցաշարեր և այլն։ Կատարվել են նաև հարցումներ տարբեր շահակիցների շրջանում և իրականցվել վերլուծություններ, վերլուծվել են դասալսումների արդյունքները և այլն։ Մշակված բոլոր փաստաթղթերը քննարկվել են ուսումնական մասի և դասախոսների հետ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ համակարգը դեռևս չունի համապատասխան գործիքակազմ ստորաբաժանումների, կառավարման համակարգի, ԿԽ-ի աշխատանքների արդյունավետության գնահատման համար։

Համաձայն ինքնավերլուծության՝ ուսանողները, դասախոսական աշխատակազմը ներգրավված են քոլեջի որակի ապահովման տարբեր մակարդակներում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում արտահայտվում է միայն հարցումներում մասնակցությամբ։ Ուսանողների շրջանում իրականացվում են հարցումներ ռեսուրսների, դասախոսների աշխատանքի բավարավածությունից։ Հարցումներ իրականացվում են նաև ծնողների շրջանում։ Հարցումների հիման վրա իրականացվել են վերլուծություններ և դուրս են բերվել խնդիրներ, ինչպիսիք են՝ ուսանողներին տրամադրվող ուսումնառության նյութի ծավալի կրճատում, դասախոսների վերաբերմունքի հետ կապված խնդիրներ, բացակա ժամերի

լրացում ուրբաթ օրերին և այլն: Մշակված հարցաշարերի արդյունավետությունը դեռևս գնահատված չէ, հարցաշարերը կազմվել են ՈԱ և Կարիերայի պատասխանատուի համատեղ ջանքերով:

Հարցումների և դրանց վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողներն առանձին գնահատում են բոլոր դասախոսներին, արդյունքում դուրս են բերվում թվային տվյալներ, թե ուսանողների քանի տոկոսն է բավարարված տվյալ դասախոսից, ինչպես նաև ներկայացվում են որոշ առաջարկություններ դասավանդման գործընթացը բարելավելու համար, օրինակ՝ դասը վարել ինտերակտիվ մեթոդներով և նորագույն տեխնոլոգիաներով՝ սահիկաշարերով: ՈԱ գործընթացներում գործատուները և շրջանավարտները ներգրավված չեն:

Որակի ապահովման համակարգը քոլեջում ձևավորման փուլում է, մի շարք գործընթացներ դեռևս պլանավորման փուլում են, օրինակ՝ ՄԿԾ մշակման և մշտադիտարկման ընթացակարգի մշակումը և համալիր գործընթացի կազմակերպումը, հաշվետվություններում վերլուծականության ապահովումը և այլն: Վերջին մեկ տարվա աշխատանքները միտված են եղել ինքնավերլուծության աշխատանքների կազմակերպմանը և մի շարք փաստաթղթերի մշակմանը:

Քոլեջն առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացով, ինքնավերլուծության իրականացումը քոլեջի առաջին փորձառությունն է, այդ իսկ պատճառով ինքնավերլուծությունը երբեմն եղել է ընդհանրական, տրամադրված տեղեկատվությունը չի համապատասխանել տվյալ չափանիշների և չափորոշիչների պահանջներին, ինչը դժվարացրել է քոլեջի վերաբերյալ իրական պատկեր ստանալու գործընթացը:

Քոլեջի կայքէջը չի գործում և որակի ապահովման գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը չի ներկայացվում արտաքին շահակիցներին: Ներքին շահակիցները ՈԱ գործընթացների և դրանց արդյունքների մասին տեղեկանում են տարբեր նիստերի քննարկումների ժամանակ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՊԲՔ-ն ունի ՈԱ գործընթացները սահմանող կանոնակարգ և որակի ապահովման պատասխանատու, վերջինս փորձում է քոլեջում ներդնել որակի ապահովման համակարգ: Այս պահին փորձագիտական խմբի համար ռիսկային է դիտարկվում ՈԱ պատասխանատուի գերբեռնվածությունը, որը կարող է հանգեցնել ՈԱ մի շարք աշխատանքների ոչ լիարժեք իրականացմանը: Բացի այդ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՈԱ պատասխանատուի մի քանի պաշտոնների համաժամանակյա զբաղեցումն առաջանցնում է շահերի բախում մնացյալ պաշտոնների արդյունավետության գնահատման տեսանկյունից, բացի այդ կարող է վտանգվել մնացյալ պաշտոններին համապատասխան գործընթացների արդյունավետ իրականացումը: Դրական է, որ ՈԱ պատասխանատուն փորձել է մի շարք գործընթացներ կանոնակարգել և մշակվել համապատասխան փաստաթղթեր, այդուանդերձ տվյալ

փաստաթղթերի առկայությունն ուղղակիորեն չի անդրադառնում ՈԱ համակարգի ձևավորման վրա, բացի այդ, հետագայում կարող են վտանգվել նաև փաստաթղթերի արդյունավետության գնահատման գործընթացը, քանի որ մշակման և գնահատման գործընթացներն իրականացվելու են նույն անձի կողմից:

Գովելի է, որ ՈԱ աշխատանքներն իրականացվում են համապատասխան պլանի առկայությամբ, այդուհանդերձ երբեմն գործողություններն ընդհանրական են (կրթության որակի շարունակական բարելավման խթանում) և ոչ թիրախային, ինչը հետագայում տեսանելի չի դարձնի իրականացված աշխատանքը, իսկ ժամկետների բացակայությունը պլանավորումը կարող է դարձնել ոչ արդյունավետ: Պլանում տեղ են գտել աշխատանքներ, որոնք չեն բխում ՈԱ պատասխանատուի իրական գործառույթներից, օրինակ՝ շրջանավարտների համար աշխատաշուկայում պահանջարկ ունեցող գիտելիքների և հմտությունների ապահովում, այս գործընթացում ՈԱ համակարգը պետք է արձագանքի աշխատանքի իրականացման արդյունավետությանը, սակայն չդառնա հիմնական գործընթացի կազմակերպողը:

Դրական է, որ քոլեջում ներդրվել է հարցումների իրականցման մշակույթը, որոնց միջոցով վեր են հանվում որոշակի խնդիրներ, որոնք իրենց լուծումներն են գտնում: Գովելի է ծնողների շրջանում իրականացվող հարցումները, որոնցով ծնողներն առավել լսելի դառնալու հնարավորություն են ստանում: Փորձագիտական խումբը գտնում է, որ նախնական փուլում այսպիսի հարցաշարերը արդյունավետ են, սակայն հետագայում դրանք բարելավման կարիք կունենան՝ առավել խորքային և համակարգային խնդիրներ դուրս բերելու համար:

Որակի ապահովման համակարգը նոր է ձևավորվել և փորձագիտական խումբը կարևորում է այս կարճ ժամանակահատվածում իրականացված աշխատանքները, նաև կարևորում է, որ հետագայում մշակվեն համապատասխան գործիքակազմեր քոլեջում իրականացվող բոլոր ոլորտներում իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման համար՝ կառավարում, ՄԿԾ, հետազոտություն և այլն: Բոլոր գործընթացների լիաժեք գնահատումը միայն կնպաստի ճիշտ պլանավորումնանը և ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք գործարկմանը: ՈԱ պատասխանատուն փորձում է կիրառել ՊԻԳԲ շրջափուլը տարբեր գործընթացներում, այդուհանդերձ շրջափուլի իրականացումը դեռևս մշակույթի չի վերածվել:

Քոլեջի կայքէջը դեռևս չի գործարկվում և ՈԱ գործընթաներն այդքան էլ տեսանելի չեն հասարակությանը, փորձագիտական խուբը լիահույս է, որ կայքի գործարկումից հետո առանձին տեղ հատկացված կլինի նաև ՈԱ գործընթացներին, որը հնարավորություն կստեղծի ՈԱ աշխատանքները լուսաբանելու համար: ՈԱ գործընթացների արդյունավետ իրականացումը կնպաստի քոլեջի տարբեր գործառույթների բարելավմանը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ ՄՊԲՔ որոշ փաստաթղթեր մշակման փուլում են, ՈԱ համակարգն ունի մարդկային ռեսուրսով համալրման անհրաժեշտություն, առկա չեն

գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ, ՈԱ գործընթացները համակարգված չեն իրականացվում, արտաքին շահակիցները ներգրավված չեն ՈԱ գործընթացներում, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: ՄՊԲՔ-ի կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Մաիամ Գևորգյան
Փորձագիտական խմբի ղեկավարի

06 փետրվարի 2023թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մարիամ Գևորգյան՝ 2013թ.-ին ընդունվել է Ֆրանսիայի Բուրգունդիայի համալսարանի /Laboratoire Interdisciplinaire Carnot de Bourgogne, ICB uB/ և ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի համաղեկավարությամբ ասպիրանտուրա, Boursiére Gouvernement Français, thése cotutelle internationale: 2016թ. պաշտպանելով ատենախոսությունը ՀՀ-ում՝ ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ Ֆրանսիայում ստացել է ֆիզիկայի ոլորտում փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 2013թ.-ից ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի հետազոտող է: 2015-2016թթ. Ֆրանսիայի Բուրգանդիայի համալսարանում դասախոսական աշխատանք է իրականացրել մագիստրոսների հետ: 2017-2018թթ. եղել է Երևանի պետական համալսարանի տեսաբան ֆիզիկ: 2017-2022թթ. եղել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի պետ: 2020թ.-ից դասախոսում է անգլերեն լեզվով ֆիզիկա Հայաստանում Ֆրանսիական համալսարանում և Երևանի Գլաձոր համալսարանում: 2012թ.-ից Օպտիկայի և ֆոտոնիկայի միջազգային կազմակերպության SPIE, 2013թ.-ից ՀՀ ԳԱԱ ՖՀԻ ինտեգրումը Եվրոպական հետազոտությանը IPERA միության անդամ է: Մի շարք գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է: Ունի տպագրված 3 գիրք, միջազգային դրամաշնորհային ծրագրեր:

Հեղինե Գևորգյան՝ 2016թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատը՝ «Կենսաքիմիա» մասնագիտությամբ՝ ստանալով ուսուցչի որակավորում: 2018թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրան «Կենսաքիմիա» մասնագիտությամբ: 2021թ.-ին ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ՝ պաշտպանելով «Պրոտոնային FOF1-ԱԵՖազի և մրջնաթթուջրածինլիազի փոխազդեցությունը ածխածնի տարբեր աղբյուրների և դրանց խառնուրդների խմորման ընթացքում» թեմայով ատենախոսությունը: Աշխատում է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում՝ ավագ լաբորանտ (գործավար), նույն ամբիոնում՝ որպես ասիստենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու: Աշխատում է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտ»-ի հիմնարար և ախտաբանական կենսաքիմիայի լաբորատորիայում՝ որպես կրտսեր գիտաշխատող:

Գայանե Ղազարյան՝ 2000թ. ավարտել է ՀՀ Երևանի «Հայբուսակ» ինստիտուտի բժշկական ֆակուլտետը՝ ստանալով բուժական գծով բժիշկի որակավորում: 2001թ.-ին ավարտել է ՀՀ Երևանի «Հայբուսակ» ինստիտուտի հետդիպլոմային մասնագիտացումը՝ թերապիա

ծրագրով՝ ստանալով բժիշկ-թերապևտի որակավորում: 2004թ. ավարտել է ՀՀ Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտը՝ ստանալով բժիշկ (օրդինատոր)՝ ճառագայթային ախտորոշման մասնագետի որակավորում: 2016թ.-ին ավարտել է Glendale Community քոլեջը: 2003-2005թթ. Արարատի պետական բժշկական քոլեջում եղել է դասախոս, իսկ 2005-2014թթ.՝ պրակտիկայի բաժնի վարիչ: 2021թ.-ին եղել է Արարատի պետական բժշկական քոլեջի կրթության որակի պատասխանատու: 2022թ.-ից մինչ այժմ նույն քոլեջի պրակտիկայի վարիչն է, հատուկ մասնագիտական առարկաների առարկայական հանձնաժողովի նախագահ և դասախոս: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների:

Մարի Սերոբյան՝ 2019թ. ավարտել է Երևանի թիվ 136 հիմնական դպրոցը, 2011-2020թթ. հաճախել է Ղ. Սարյանի անվան արվեստի դպրոց, իսկ՝ 2018-2020թթ. ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն: 2019թ-ից մինչ օրս սովորում է Երևանի հենակետային բժշկական քոլեջում, «Քույրական գործ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի է: 2021թ. մասնակցելէ Newmag Summer fest փառատոնին որպես կամավոր: 2022թ. մասնակցել է Որակի ապահովման ազգային կենտրոնի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող փորձագետների վերապատրաստմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	14.11.2022թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	11:10	12:00	50 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում	12:10	13:20	70 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
5.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած աշխատանքային խմբի հետ (10-12 հոգի)	14:40	15:20	40 րոպե
6.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ (10-12 հոգի)	15:30	16:30	60 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ (10-12 հոգի)	16:40	17:40	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:50	19:00	70 րոպե

	15.11.2022թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնի վարիչների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Դասալսումներ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	11:50	12:50	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ(10-12 հոգի)	14:10	15:00	50 րոպե
6.	Հանդիպում քոլեջի ստորաբաժանումների ղեկավարների և այլ աշխատակիցների հետ (կադրերի բաժին, պրակտիկայի բաժին, ուսումնական մաս, կարիերայի կենտրոն, հաշվապահ, գրադարանավար, լաբորանտներ)	15:10	16:10	60 րոպե
7.	Հանդիպում քոլեջի Կառավարման խորհրդի անդամների հետ	16:20	17:20	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

	16.11.2022թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» և «Քույրական գործ» կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» և «Քույրական գործ», կրթական ծրագրերի դասախոսական կազմի հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի դասախոսական կազմի հետ (10-12 հոգի)	10:45	11:45	60 րոպե
3.	Հանդիպում «Ատամնատեխնիկական գործ», «Քույրական գործ», կրթական ծրագրերի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների հետ (10-12 հոգի)	12:00	12:50	50 րոպե
4.	Հանդիպում Ուսանողական խորհրդի հետ		13:00	13:40	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:50	14:50	60 րոպե
6.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ		15:00	15:40	40 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում		15:50	18:30	160 րոպե

	17.11.2022թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:40	11:20	40 րոպե
3.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպումներ	11:30	12:50	80 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի Քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպումներ	14:10	16:30	140 րոպե
6.	Հանդիպում քոլեջի ղեկավար կազմի հետ և փորձագիտական այցի ամփոփում	16:40	17:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Պատերազմի և համավարակի ընթացքում մշակված ռիսկերի կառավարման վերլուծություն	1
2.	ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույց	1
3.	Նախորդ ռազմավարական ծրագիր	1
4.	Նախորդ ռազմավարական ծրագրի գնահատում	1
5.	Ներքին և արտաքին շահակիցների շրջանում հարցումների վերլուծություններ, ֆոկուս խմբային քննարկումների արձանագրություններ	1
6.	Ստորաբաժանումների աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	2
7.	Հաստիքացուցակ՝ ըստ աշխատավարձերի /վերջին 2 տարիների/	2
8.	Տնօրենի տարեկան հաշվետվություններ /վերջին 2 տարիների/	2
9.	Ուսանողների կողմից դասախոսների գնահատման հարցաշարեր	2
10.	Էթիկայի կանոնակարգ	2
11.	Նախահաշիվ /վերջին 2 տարիների/	2
12.	Կառավարման խորհրդի արձանագրություններ, որտեղ ներկայացված են ուսանողների և/կամ դասախոսների առաջարկները	2
13.	Ամբիոնների, ՈւԽ-ի նիստերի արձանագրություններ /վերջին 2 տարիների/	2
14.	Ատեստավորման հանձնաժողովի նախագահի եզրակացություններ/հաշվետվություններ/	3
15.	Դասացուցակ	3
16.	Պրակտիկաների ծրագրեր և օրագրեր /4-ական օրինակներ բոլոր ՄԿԾ-ներից/	3
17.	Ամբիոների նիստերի արձանագրություններ որտեղ քննակվում են կրթական ծրագրերի փոփոխությունները	3
18.	Ատամնատեխնիկական գործ, Քույրական գործ, Դեղագործություն ՄԿԾ-ների հանձնարարականներ	3
19.	Բուհերի հետ համագործակցության պայմանագրեր/հուշագրեր	3
20.	Կուրսային, ռեֆերատ և ինքնուրույն աշխատանքների օրինակներ	3
21.	Քոլեջի գործունեությունը ներկայացնող բուկլետի օրինակ:	4
22.	Կարիերայի կենտրոնի գործունեության կանոնակարգ	4
23.	ՈւԽ կանոնադրություն	4
24.	ՈԻԽ աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	4

25.	Վերջին 3 տարիներին մասնագիտական վերապատրաստումներ անցած դասախոսների ցանկ՝ նշելով նաև վերապատրաստման թեման, տևողությունը, իրականացնող կազմակերպությունը	5
26.	Դասալսումների վերլուծություններ, Դասալսումների մատյաններ	5
27.	Դասախոսների պորտֆոլիոներ	5
28.	Դասավանդող բժիշկ դասախոսների համապատասխան ՇՄԶ-ները հաստատող փաստաթղթերը	5
29.	Ուսանողներին տրվող հետազոտական աշխատանքներ /նախագծեր, ինքնուրույն աշխատանքներ, ռեֆերատներ/	6
30.	Կոնֆերանսներին, մրցույթներին, փառատոններին մասնակցության փաթեթներ	6
31.	Ռեսուրսներից բավարավածության հարցումների վերլուծություններ	7
32.	Տեղեկատվություն քոլեջի կողմից իրականացված կամավորական աշխատանքների վերաբերյալ	8
33.	Գործատուների հետ կնքված պայմանագրերի օրինակներ	9
34.	ՈԱ աշխատանքային պլաններ և հաշվետվություններ /վերջին 3 տարիների/	10
35.	Որակի պատասխանատուի կողմից իրականացված բոլոր հարցումների վերլուծությունները	10
36.	Որակի ապահովման քաղաքականություն- և ընթացակարգեր+	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. Գրադարան,
3. Կաբինետներ, լաբորատորիաներ,
4. Բուժկետ,
5. Ստորաբաժանումներ,
6. Մարտունի ԲԿ։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲԿ	Բժշկական կենտրոն
ԳԱՑ	Արդյունավետության գնահատման ցուցանիշ
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԽ	Կառավարման խորհուրդ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԿԾ	Մասնագիտական կրթական ծրագիր
ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՄԿՈՒԶԱԿ	Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
ՄՊԲՔ	Մարտունու պետական բժշկական քոլեջ
ՄՈՒՀ	Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ	Որակի ապահովում
ՈԱԱԿ	Որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ	Որակավորումների ազգային շրջանակ
ՊԿՉ	Պետական կրթական չափորոշիչ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՌԾ	Ռազմավարական ծրագիր
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն